ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԳՐԻԳՈՐՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատ թիվ 3627/06)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

10 հուլիսի, 2012թ.

ՎԵՐՋՆԱԿԱՆ Է

17/12/2012

Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44–րդ հոդվածի 2–րդ կետի համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը, հետևյալ կազմով՝

Josep Casadevall, *Նախագահ,*
Corneliu Bîrsan,
Alvina Gyulumyan,
Egbert Myjer,
Ján Šikuta,
Luis López Guerra,
Nona Tsotsoria, *դատավորներ,*

և Marialena Tsirli, Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,

2012 թվականի հունիսի 12-ին կայացած դռնփակ նիստում,

կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Գործը սկիզբ է առել 2006 թվականի հունվարի 9-ին՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Վահե Գրիգորյանի («դիմումատու») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 3627/06 գանգատի հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացնում էին Երևանում գործունեություն ծավալող փաստաբանները՝ պրն Ա. Գրիգորյանը, պրն Ա. Զաքարյանը, պրն Տ. Աթանեսյանը և պրն Մ. Շուշանյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը («Կառավարություն») ներկայացնում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ, պրն Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուն պնդել է, մասնավորապես, որ իրեն 2005 թվականի հոկտեմբերի 10–ից ժամը 21:50–ից մինչև 2005 թվականի հոկտեմբերի 11-ը ժամը 5:05–ը անօրինական կերպով զրկել են ազատությունից, որ ներպետական դատարանները չեն ներկայացրել իրեն կալանքի տակ պահելու հիմնավոր և բավարար պատճառներ, որ նա չի ունեցել հայցի ուժով օժտված ոչ նյութական վնասի փոխհատուցման իրավունք, և որ իր դեմ հարուցված քրեական վարույթը երկարատև է եղել:

4. 2010 թվականի հունվարի 14–ին գանգատն ուղարկվել է Կառավարություն: Որոշվել է նաև իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն (29–րդ հոդվածի 1–ին կետ):

ՓԱՍՏԵՐԸ

Ի. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1975 թվականին և ապրում է Երևանում:

Ա. Քրեական գործի հարուցումը և դիմումատուի ձերբակալումը

6. Դիմումատուն մասնագիտությամբ իրավաբան է:

7. 2005 թվականի հունիսի 10-ին քննիչը որոշել է քրեական գործ հարուցել: Համապատասխան որոշման մեջ նշված է եղել.

«... Քննարկելով [ՀՀ ազգային անվտանգության ծառայության] կողմից ստացված նյութերը [դիմումատուի կողմից] 2003 թվականի հունիս-հուլիս ամիսներին ակնհայտ կեղծ փաստաթղթեր պատրաստելու և օգտագործելու, ինչպես նաև իրեն վստահված ուրիշի գույքը... յուրացման եղանակով հափշտակելու վերաբերյալ և նկատի ունենալով, որ նյութերում կան ՀՀ քրեական օրենսգրքի [ՔՕ] 179–րդ հոդվածի 3–րդ մասի 1–ին կետով և 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ .... Որոշեցի... հարուցել քրեական գործ...»

8. 2005 թվականի հուլիսի 4-ին, 15-ին և 28-ին դիմումատուին կանչել են Գլխավոր դատախազություն և վերոնշյալ քրեական գործի շրջանակներում հարցաքննել որպես վկա:

9. 2005 թվականի հոկտեմբերի 7-ին դիմումատուին կրկին կանչել են Գլխավոր դատախազություն, որտեղ նա ժամը 19:50–ից մինչև 21:50–ը մասնակցել է մեկ այլ վկայի՝ Ա. Հ–ի հետ առերեսմանը:

10. Նույն օրը ժամը 21:50–ին քննիչը կազմել է ձերբակալման արձանագրություն, որում նշված էր, որ դիմումատուն ձերբակալվել է այդ ժամին Ա.Հ.–ի հետ գաղտնի համաձայնությամբ և կեղծված փաստաթղթեր օգտագործելու միջոցով առանձնապես խոշոր գույք հափշտակելու կասկածանքով: Պարզվում է, որ մեկ այլ անձ՝ Տ. Ա.–ն, նույնպես կասկածյալ է եղել այդ հանցագործությունների կատարման մեջ:

Բ. Դիմումատուի կալանավորման ընթացակարգը

11. 2005 թվականի հոկտեմբերի 10-ին դիմումատուին պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել ՔՕ–ի 178–րդ հոդվածի 3–րդ մասի 1–ին կետի և 325–րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

12. Նույն օրը քննիչը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝

դիմումատուին երկամսյա ժամկետով կալանավորելու վերաբերյալ: Քննիչն իր միջնորդությունը հիմնավորել է այն փաստով, որ դիմումատուն կատարել է ծանր հանցագործություն և որ ազատության մեջ մնալով կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը փաստաթղթերը կեղծելու, նախաքննության տվյալները հրապարակելու և այլ գործողություններով որպես վկա բազմիցս հրավիրվել է հարցաքննության, սակայն հրաժարվել է ցուցմունքներ տալուց, հարցերին պատասխանելուց, կատարված հանցանքների հետևանքով հափշտակել է առանձնապես խոշոր չափի գումար: Պարզվել է, որ քրեական գործին վերաբերող նյութերի երկու հատոր է ներկայացվել դատարան՝ ի հիմնավորումն այդ միջնորդության:

13. Նույն օրը ժամը 20:20–ին առաջին ատյանի դատարանում, որը նախագահում էր մեկ դատավոր, դիմումատուի և նրա 10 փաստաբանների ներկայությամբ սկսվել է քննիչի ներկայացրած միջնորդության քննությունը: Պարզվել է, որ նիստը անցկացվել է դատավորի աշխատասենյակում:

14. Դատական նիստի սկզբում դիմումատուի փաստաբանները պահանջել են, որպեսզի իրենց տրամադրվի քննիչի միջնորդության պատճենը: Քննիչը փաստարկներ է բերել այն մասին, որ օրենքով նման պահանջ նախատեսված չէ և բավական է միայն միջնորդության ընթերցումը: Դատարանն, այնուամենայնիվ, կարգադրել է, որպեսզի դիմումատուի փաստաբաններին տրամադրվի միջնորդության պատճենը և հայտարարել է տասը րոպե տևողությամբ ընդմիջում, որպեսզի նրանք ծանոթանան դրան:

15. Ընդմիջումից հետո դիմումատուի փաստաբաններից մեկը դատարանին դիմել է հարցով, թե արդյո՞ք նա իրավունք ունի գրավոր առարկություն ներկայացնել միջնորդության դեմ և եթե՝ այո, ապա կարո՞ղ է նրան բավականաչափ ժամանակ տրամադրվել այդ անելու համար: Նախագահող դատավորը պատասխանել է, որ կարող են արվել միայն բանավոր առարկություններ և որ այդ ժամանակը կարելի է պահանջել միջնորդությունը քննիչի կողմից ներկայացվելուց հետո: Փաստաբանն այնուհետև դիմել է դատարանին հարցով, թե արդյո՞ք նա իրավունք ունի ծանոթանալ այն նյութերին, որոնց վրա հիմնված է քննիչի միջնորդությունը: Քննիչն առարկել է այդ պահանջի դեմ՝ նշելով, որ դիմումատուն և նրա փաստաբանները Քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 65-րդ և 73-րդ հոդվածների համաձայն չունեն այդ իրավունքը: Դատավորը նշել է, որ փաստաբանները նյութերին ծանոթանալու իրավունք չունեն՝ ՔԴՕ–ի 285–րդ հոդվածի համաձայն: Դիմումատուի փաստաբանը դատավորին բացարկ է հայտնել՝ պնդելով,

որ դա մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքի խախտում է: Նախագահող դատավորը քննել է բացարկը և որոշել է մերժել այն:

16. Ժամը 22:00–ից հետո դիմումատուի փաստաբանները միջնորդություն են ներկայացրել՝ պահանջելով, որպեսզի նախագահող դատավորը ճանաչի այն փաստը, որ ներպետական իրավունքի համաձայն թույլատրվող 72–ժամյա ձերբակալման ժամանակահատվածը լրացել էր 21:50–ին և որ նրա ազատության հետ կապված որևէ սահմանափակում չկա: Քննիչն առարկել է, փաստելով, որ միջնորդությունը ոչ մի կապ չունի դատարանի կողմից քննվող դիմումատուի կալանավորման հարցի հետ: Նախագահող դատավորը քննել է միջնորդությունը և հայտարարել միջնորդությունը ավելի ուշ քննելու իր որոշման մասին:

17. Դիմումատուի փաստաբանները պնդել են, որ դիմումատուն իրավունք ունի ազատ արձակվելու, քանի որ նրա 72–ժամյա ձերբակալման ժամանակահատվածը լրացել է, և բացարկ են հայտնել դատավորին՝ այդ հարցով որոշում կայացնելուց հրաժարվելու համար: Դիմումատուն ևս միացել է այդ բացարկին և նշել, որ դատավորի կողմից վերջին միջնորդության քննության ժամանակ նա դատավորի աշխատասենյակից դուրս էր եկել ընդունարան և նրան չորս ոստիկաններ թույլ չէին տվել լքել ընդունարանը: Քննիչն առարկել է այդ միջնորդության դեմ, փաստելով, որ դիմումատուին նախքան ընդմիջում հայտարարվելը թույլ չի տրվել լքել նիստերի դահլիճը առանց նախագահող դատավորի թույլտվության՝ ՔԴՕ–ի 65-րդ հոդվածի 4–րդ մասի 6–րդ կետի համաձայն: Քանի որ ընդմիջում հայտարարված չի եղել, դիմումատուին թույլ չի տրվել լքել նիստերի դահլիճը: Նախագահող դատավորը քննել է բացարկը և որոշել մերժել այն:

18. Նախագահող դատավորն այնուհետև անցել է քննիչի միջնորդության քննությանը: Դիմումատուի փաստաբանները դատարանից պահանջել են նիստը հետաձգել մի քանի ժամով և խնդրել հնարավորություն տալ ծանոթանալ գործի նյութերին՝ իրենց առարկությունները նախապատրաստելու համար: Քննիչն առարկել է՝ նշելով, որ իր միջնորդությունը պետք է անհապաղ քննվի: Նախագահող դատավորը քննել է պահանջը և որոշել է մերժել այն:

19. Դիմումատուն և նրա փաստաբաններն այնուհետև, ի թիվս այլոց, հայտարարել են, որ քրեական վարույթն իրականացնող մարմնից դիմումատուի հնարավոր թաքնվելու մտավախությունը, հիմնավորված չի եղել: Քրեական վարույթը տևել է չորս ամիս, և նա երբեք երկրից փախչելու փորձ չի կատարել: Ավելին, նա ունի մշտական բնակության իրավունք և տարեց ու հիվանդ ծնողներ, որոնք գտնվում են

բացառապես իր խնամքի տակ: Ի վերջո, նա միշտ ներկայացել է քննիչի կանչերի դեպքում և որևէ մտադրություն չի ունեցել խոչընդոտել գործի քննությանը:

20. 2005 թվականի հոկտեմբերի 11-ին ժամը 5:05–ին դատավորը նիստը փակված է համարել՝ հայտարարելով իր որոշման մասին: Դատավորը քննիչի միջնորդությունը հիմնավոր է համարել և կարգադրել է դիմումատուին կալանավորել մինչև 2005 թվականի դեկտեմբերի 7-ը՝ հաշվի առնելով մեղսագրվող արարքների հասարակական վտանգավորությունը, ինչպես նաև այն, որ այդ արարքների համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է և բավարար հիմքեր կան ենթադրելու, որ դիմումատուն կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու և քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու ճանապարհով: Դատավորն իր որոշման մեջ նաև նշել է, որ 2005 թվականի հոկտեմբերի 10-ին ժամը 21:50–ից հետո դիմումատուի ազատությունը սահմանափակված չէր և վկայակոչել է ՔԴՕ–ի 65–րդ հոդվածի 4–րդ մասի 6–րդ կետի պահանջները:

21. Դիմումատուի խոսքերով՝ ամեն անգամ, երբ նախագահող դատավորը քննում էր բացարկը կամ միջնորդությունը, նիստի մասնակիցներին խնդրում էին լքել դատավորի աշխատասենյակը: Յուրաքանչյուր նման դեպքում նրան կարգադրում էին սպասել դատավորի աշխատասենյակի ընդունարանում, և այն լքել չէր թույլատրվում չորս ոստիկանի կողմից, մինչդեռ նիստի մյուս մասնակիցները կարող էին ազատ շրջել կամ լքել դատարանի շենքը:

22. 2005 թվականի հոկտեմբերի 17-ին դիմումատուի փաստաբանները բողոք են ներկայացրել: Իրենց բողոքի մեջ նրանք, ի թիվս այլոց, բերել են այն փաստարկը, որ նրանց համար հասանելի չեն եղել երկու հատորից բաղկացած գործի նյութերը, որոնք ներկայացվել են դատարան՝ ի հիմնավորումն քննիչի միջնորդության, և որ իրենք ընդամենը տասը րոպե են ունեցել քննիչի միջնորդությունը ուսումնասիրելու և իրենց առարկությունները նախապատրաստելու համար: Ավելի ուշ նրանք բերել են նաև այն փաստարկը, որ առաջին ատյանի դատարանը դիմումատուի կալանքը հիմնավորված է համարել այն հիմքով, որը չի վկայակոչվել քննիչի կողմից, այն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելը, քրեական վարույթին մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելը և

քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով չներկայանալը: Ի վերջո, նրանք բերել են այն փաստարկը, որ, ամեն դեպքում, դիմումատուի կալանքի հիմնավորման մեջ առկա չէ որևէ պատճառաբանություն, քանի որ առաջին ատյանի դատարանը չէր պատճառաբանել, թե որոնք էին վերոնշյալ ռիսկերը, որոնք առկա էին դիմումատուի գործում:

23. 2005 թվականի հոկտեմբերի 27-ին Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը դիմումատուի բողոքն ուսումնասիրել է դիմումատուի յոթ փաստաբանների ներկայությամբ: Պարզվում է, որ այդ վարույթի ընթացքում դիմումատուի փաստաբաններին թույլ է տրվել ծանոթանալ այն նյութերին, որոնք քննիչը ներկայացրել է ի հիմնավորումն իր միջնորդության: Այդ նյութերը բաղկացած են եղել 69 էջից և ներառել են, ի թիվս այլոց, ձերբակալման արձանագրությունը, առաջադրված մեղադրանքները և դիմումատուի հարցաքննության արձանագրությունը: Փաստաբանները, սակայն, պնդել են, որ առաջին ատյանի դատարան ներկայացված է եղել նյութերի երկու հատոր և պահանջել են, որպեսզի Վերաքննիչ դատարանը կարգադրի վարույթն իրականացնող մարմիններին հրապարակել այդ նյութերը: Այդ պահանջը մերժվել է, որի հետևանքով դիմումատուի փաստաբաններն ապարդյուն վիճարկել են դատարանի անաչառությունը: Այնուհետև փաստաբանները միջնորդություն են ներկայացրել՝ ջանալով ստանալ դատական նիստի ձայնային արձանագրությունը: Վերաքննիչ դատարանը միջնորդությունը քննել է և մերժել այն: Կողմերն այնուհետև փաստարկներ են ներկայացրել քննիչի միջնորդության և դիմումատուի բողոքարկման բովանդակության վերաբերյալ:

24. Վերաքննիչ դատարանը որոշել է մերժել դիմումատուի բողոքը՝ համարելով, որ գործի նյութերը ցույց են տալիս, որ հիմնավոր կասկածներ կան այն մասին, որ նա կատարել է մեկ տարին գերազանցող ազատազրկման ժամկետով պատժվող հանցագործություն, և որ մեղսագրվող արարքների և գործի առանձնահատուկ հանգամանքների բնույթը և վտանգավորությունը բավարար հիմքեր են տալիս կարծելու, որ դիմումատուն կարող է խոչընդոտել գործի քննությանը: Վերաքննիչ դատարանն ավելի ուշ գտել է, որ առաջին ատյանի դատարանում վարույթն իրականացվել է մրցակցային եղանակով և կողմերի հավասարությունը սկզբունքին համապատասխան՝ ինչպես պահանջվում է Կոնվենցիայով և ՔԴՕ–ով: Ավելին, առաջին ատյանի դատարանը պահպանել է ՔԴՕ-ի 201–րդ հոդվածի պահանջները և նրա որոշումը հիմնված չի եղել դիմումատուին անհայտ հանգամանքների վրա: Դիմումատուի կալանքը հիմնված է եղել

գործում առկա փաստական հանգամանքների վրա, և առաջին ատյանի դատարանը դուրս չի եկել քննիչի միջնորդության շրջանակներից:

25. 2005 թվականի նոյեմբերի 8-ին դիմումատուի փաստաբանները բողոք են ներկայացրել Վճռաբեկ դատարան:

26. 2005 թվականի նոյեմբերի 27-ին Հայաստանում սահմանադրական փոփոխություններ են կատարվել, որոնք ուժի մեջ են մտել 2005 թվականի դեկտեմբերի 6-ից: Այդ փոփոխությունների արդյունքում Վճռաբեկ դատարանին նոր դեր է վերապահվել, այն է՝ օրենքի միատեսակ կիրառությունը:

27. Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահը դատարանի նախագահների խորհրդի 2005 թվականի դեկտեմբերի 8-ի որոշման համաձայն, որն ընդունվել էր վերոնշյալ սահմանադրական փոփոխությունների առնչությամբ, 2005 թվականի դեկտեմբերի 9-ի նամակով բողոքն առանց քննելու վերադարձրել է :

Գ. Դիմումատուի կալանքի երկարաձգումը

28. 2005 թվականի նոյեմբերի 28–ին քննիչը միջնորդություն է ներկայացրել՝ փորձելով դիմումատուի կալանքը երկարաձգել ևս երկու ամսով՝ մինչև 2006 թվականի փետրվարի 7–ը: Քննիչը հիմնավորել է երկարաձգման անհրաժեշտությունը իր նախորդ՝ 2005 թվականի հոկտեմբերի 10-ի միջնորդության մեջ առկա միևնույն հիմքերով:

29. Դիմումատուի փաստաբանները առարկություններ են ներկայացրել այդ միջնորդության դեմ՝ փաստելով, որ միջնորդությունը ներկայացված է եղել նախատեսված ժամկետից ուշ և հիմնված է եղել նախորդ միջնորդության մեջ վկայակոչված միևնույն անհիմն պնդումների վրա:

30. 2005 թվականի դեկտեմբերի 1-ին ժամը 11:00–ին առաջին ատյանի դատարանը քննիչի միջնորդության քննությունը սկսել է քննիչի և դիմումատուի հինգ փաստաբանների ներկայությամբ: Փորձելով ստանալ քննիչի միջնորդության պատճենը և կից փաստաթղթերը՝ դիմումատուի փաստաբանները միջնորդություն են ներկայացրել, որն, ակնհայտորեն, բավարարվել է: Այնուհետև նրանք միջնորդություն են ներկայացրել՝ փորձելով նիստը հետաձգել մեկ օրով՝ պաշտպանությանը նախապատրաստվելու համար: Այդ միջնորդությունը բավարարվել է մասնակիորեն, և նիստը հետաձգվել են մինչև 16:00–ն: Նիստի վերսկսումից հետո դիմումատուի փաստաբանները ներկայացրել են մեկ այլ միջնորդություն՝ փորձելով ապահովել դիմումատուի ներկայությունը

դատավարությանը: Այս միջնորդությունը բավարարվել է, և դատավարությունը հետաձգվել է մինչև հաջորդ օրվա ժամը 12-ը:

31. 2005 թվականի դեկտեմբերի 2-ին Գլխավոր դատախազը ընդունել է քննիչի միջնորդությունը՝ նախաքննության ժամկետը մինչև 2006 թվականի փետրվարի 10-ը երկարաձգելու վերաբերյալ, որը պետք է լրանար 2005 թվականի դեկտեմբերի 10–ին:

32. Միևնույն օրը ժամը 12-ին առաջին ատյանի դատարանը շարունակել է քննիչի՝ 2005 թվականի նոյեմբերի 28-ի միջնորդության քննությունը: Դիմումատուի փաստաբաններն ի պատասխան այդ միջնորդության ներկայացրել են գրավոր դիտողություններ և մի շարք հիմնավորող փաստաթղթեր: Այնուհետև դիմումատուն բանավոր փաստարկներ է բերել՝ վիճարկելով իր՝ շարունակաբար կալանավորված լինելու հիմքերը: Դատավորն անցել է քննիչի կողմից ներկայացված գրավոր նյութերի քննությանը և այնուհետ հեռացել է խորհրդակցական սենյակ:

33. Առաջին ատյանի դատարանը քննիչի միջնորդությունը հիմնավորված է համարել և որոշել է բավարարել այն՝ հաշվի առնելով, որ դեռևս պահպանվում են դիմումատուի կալանքի հիմքերը:

34. 2005 թվականի դեկտեմբերի 8-ին Հայաստանի փաստաբանների պալատը որոշել է դիմել Գլխավոր դատախազություն՝ պահանջելով՝ դիմումատուի կալանքը փոխարինել փաստաբանների պալատի երաշխավորությամբ:

35. 2005 թվականի դեկտեմբերի 12-ին դիմումատուի փաստաբանները բողոք են ներկայացրել առաջին ատյանի դատարանի 2005 թվականի դեկտեմբերի 2-ի որոշման դեմ: Իրենց բողոքում նրանք, մասնավորապես, բերել են այն փաստարկները, որ քննիչի միջնորդությունը ներկայացված էր նախատեսված ժամկետից ուշ և այդ պատճառով չպետք է քննվեր: Ավելին, դատարանին ներկայացված չէր որևէ նյութ՝ ի հիմնավորումն այդ միջնորդության: Այդ իսկ պատճառով առաջին ատյանի դատարանը քննության չէր առել քրեական գործի նյութերը: Այն չի վերլուծել նաև քննիչի միջնորդության մեջ բերված փաստարկները: Այդ իսկ պատճառով որոշումն անհիմն է եղել և դրանում տրվել է ստանդարտ պատճառաբանություն:

36. Գլխավոր դատախազությունը 2005 թվականի դեկտեմբերի 16-ի նամակով փաստաբանների պալատի նախագահին տեղեկացրել է, որ դեռևս պահպանվում են դիմումատուին կալանքի տակ պահելու հիմքերը, և այդ իսկ պատճառով արդարացված չէ այն փոխարինելը խափանման մեկ այլ միջոցով:

37. 2005 թվականի դեկտեմբերի 22-ին և 23-ին Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը նիստ է անցկացրել՝ քննելով դիմումատուի բողոքը: Պարզվում է, որ Վերաքննիչ դատարանում վարույթի ընթացքում դիմումատուի փաստաբաններից մեկի կողմից պահանջ է ներկայացվել դիմումատուի կալանքը փոխարինել ազատազրկում չենթադրող խափանման միջոցով: Այնուհետև պարզվում է, որ քննիչը, ի հիմնավորումն իր միջնորդության, ներկայացրել է որոշ փաստաթղթեր, որոնք ներկայացված չեն եղել առաջին ատյանի դատարանում: Դիմումատուի փաստաբաններին թույլ է տրվել ծանոթանալ այդ փաստաթղթերին: Նրանք, սակայն, առարկել են այդ փաստաթղթերը հաշվի առնելու դեմ՝ պնդելով, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր հետազոտելու փաստաթղթեր, որոնք հետազոտված չեն եղել առաջին ատյանի դատարանում :

38. 2006 թվականի դեկտեմբերի 26-ին Վերաքննիչ դատարանը շարունակել է քննել դիմումատուի բողոքը և որոշում է կայացրել մերժել այն նույն հիմքերով, ինչ նախկինում՝ ավելացնելով, որ գործի բարդությունը, ձեռնարկվելիք քննչական գործողությունների ծավալը, դիմումատուի վարքագիծը (անգամ եթե մեղադրյալը պարտավոր չէ համագործակցել, այնուամենայնիվ, նա հրաժարվել է ցուցմունք տալ և տրամադրել ձեռագրի և ստորագրության նմուշներ) և այն փաստը, որ նույն գործով մյուս երկու մեղադրյալները փախուստի մեջ են, բավարար հիմքեր է տալիս կարծելու, որ դիմումատուն կարող է խոչընդոտել գործի քննությանը: Ինչ վերաբերում է քննիչի կողմից նոր նյութեր ներկայացնելուն, ապա Վերաքննիչ դատարանը համարել է, որ օրենքը քննիչին թույլ է տալիս դա անել:

Դ. Դիմումատուին ազատ արձակելը և քրեական վարույթի կասեցումը

39. 2006 թվականի հունվարի 27-ին քննիչը միջնորդություն է ներկայացրել դիմումատուի կալանքի ժամկետը ևս երկու ամսով՝ մասնավորապես, մինչև 2006 թվականի ապրիլի 7-ը երկարաձգելու մասին: Քննիչը հիմնավորել է կալանքի ժամկետը երկարաձգելու անհրաժեշտությունը իր կողմից ներկայացված նախորդ միջնորդություններում առկա միևնույն հիմքերով:

40. 2006 թվականի փետրվարի 1-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը քննել է այս միջնորդությունը: Առաջին ատյանի դատարանում վարույթի ընթացքում դիմումատուի փաստաբաններից մեկը հղում է կատարել Փաստաբանների պալատի՝ 2005 թվականի դեկտեմբերի 8-ի պահանջին՝ որպես դիմումատուին ազատելու լրացուցիչ փաստական

հանգամանք: Առաջին ատյանի դատարանը գտել է, որ քննիչի միջնորդությունը հիմնավորված է, և որոշել է այն բավարարել՝ հաշվի առնելով, որ դիմումատուի կալանավորման համար դեռևս առկա են եղել հիմքեր: Ինչ վերաբերում է Փաստաբանների պալատի պահանջին, ապա առաջին ատյանի դատարանը գտել է, որ այս պահանջն ուղղված է Գլխավոր դատախազությանը և որ, ամեն դեպքում, կալանքին փոխարինող միակ այլընտրանքային խափանման միջոցը գրավն էր:

41. Չպարզված ժամանակահատվածում դիմումատուի փաստաբանները վերաքննիչ բողոք են ներկայացրել:

42. 2006 թվականի փետրվարի 15–ին Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը բեկանել է առաջին ատյանի դատարանի որոշումը և որոշել է դիմումատուին ազատ արձակել: Վերաքննիչ դատարանը գտել է, որ հիմնավոր կասկածի շարունակական առկայությունն այլևս բավարար չէ դիմումատուի շարունակվող կալանքը հիմնավորելու համար և որ դիմումատուի կողմից մինչդատական վարույթում գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունն արդեն փոքր էր վարույթի այդ փուլում:

43. 2006 թվականի օգոստոսի 10-ին քննիչը որոշել է կասեցնել քրեական վարույթը ՔԴՕ-ի 31–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ և 5–րդ կետերի համաձայն: Համապատասխան որոշման՝ դիմումատուի վարաբերյալ մասով սահմանվում է.

«Վարույթի ներկա փուլում հնարավոր չէ առանձնացնել [դիմումատուի] դեմ քրեական գործի նյութերը և մեղադրական եզրակացություն ներկայացնել, քանի որ նրա [A.H. և T.A.] հանցակիցների փախուստի և չբացահայտված գտնվելու վայրի պատճառով անհնարին է դառնում [Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի] 6–րդ հոդվածի 3–րդ կետի «դ» ենթակետին համապատասխան [դիմումատուի] իրավունքների երաշխավորումը... Միաժամանակ, հաշվի առնելով նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցը, հնարավոր չէ [դիմումատուի] դեմ քրեական վարույթը դադարեցնել որևէ հիմքով:

Հիմնվելով վերոհիշյալի վրա, հաշվի առնելով այն փաստը, որ [մեղադրյալներ A.H.–ի և T.A.–ի] հայտարարություններ[ը] բացահայտված փաստական հանգամանքների վերաբերյալ, որոնք նաև հաստատվել են [նրանց] փախուստից հետո իրականացված նախաքննությամբ և քննչական միջոցառումներով, որոնք պետք է իրականացվեին նրանց մասնակցությամբ, կարող էին զգալի նշանակություն ունենալ քրեական գործի մյուս մեղադրյալի [դիմումատուի] դեմ մեղադրանքի բովանդակության որոշման և նրա կողմից կատարված արարքների՝ քրեական իրավունքի տեսանկյունից որակման և գնահատման հարցում[: Այնուամենայնիվ, [A.H.–ը and T.A.–ը] գտնվում են հետախուզման մեջ և նրանց գտնվելու վայրը անհայտ է, այն է՝ առկա է

անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործի հետագա քննությանը...»

44. 2007 թվականի դեկտեմբերի 17–ին Գլխավոր դատախազությունից քրեական գործն ուղարկվել է Ազգային անվտանգության ծառայություն:

45. Պարզվում է, որ գործում հետագա զարգացումներ չեն եղել: Դիմումատուի դեմ վարույթը դեռևս ընթացքի մեջ էր 2010 թվականի սեպտեմբերի 10–ի դրությամբ, այսինքն՝ այն ամսաթվի, երբ Կառավարությունը ներկայացրել է սույն գործով վերջին Առարկությունը:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. 1995 թվականի Սահմանադրությունը (ուժի մեջ է 2005 թվականի դեկտեմբերի 6–ից՝ 2005 թվականի նոյեմբերի 27–ին ընդունված փոփոխություններից հետո)

46. 92–րդ հոդվածով նախատեսվում է, որ Հայաստանի բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, Վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը:

Բ. Քրեական օրենսգիրք (ուժի մեջ է 2003 թվականի օգոստոսի 1–ից)

47. Համաձայն 19–րդ հոդվածի՝ ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի՝ հանցագործությունները դասակարգվում են՝ ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների: Դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը, համարվում են միջին ծանրության հանցագործություններ, մինչդեռ այն արարքները, որոնց համար նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը, համարվում են ծանր հանցագործություններ:

48. 178–րդ հոդվածի 3–րդ մասի 1–ին կետով նախատեսվում է, որ խարդախությունը, որը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափերով հափշտակությունն է կամ այդ գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը,

պատժվում է չորսից ութ տարվա ազատազրկմամբ՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

49. 325–րդ հոդվածի 2–րդ մասով նախատեսվում է, որ իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող վկայական կամ պաշտոնական այլ փաստաթուղթ կեղծելը՝ կեղծողի կողմից անձամբ կամ այլ անձի կողմից դրանք օգտագործելու կամ իրացնելու նպատակով կամ այդպիսի փաստաթուղթ իրացնելը կամ նույն նպատակներով կեղծ կնիքներ, դրոշմներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ պատրաստելը կամ իրացնելը, ինչպես նաև ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելը՝ եթե դրանք կատարվել են մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Գ.Քրեական դատավարության օրենսգիրք (ուժի մեջ է 1999 թվականի հունվարի 12–ից)

1. Ձերբակալում և կալանք

50. Համաձայն 65–րդ հոդվածի 2–րդ մասի 16–րդ կետի և 73–րդ հոդվածի 1–ին մասի 12–րդ կետի՝ մեղադրյալը և նրա պաշտպանը նախաքննության ավարտման պահից իրավունք ունեն ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություն:

51. 65–րդ հոդվածի 4–րդ մասի 6–րդ կետով նախատեսվում է, որ մեղադրյալը պարտավոր է մինչև ընդմիջում հայտարարելն, առանց նախագահող դատավորի թույլտվության, չլքել դատական նիստերի դահլիճը: 73–րդ հոդվածի 5–րդ մասի 3–րդ կետի համաձայն պաշտպանն ունի նույն պարտավորությունը:

52. 65–րդ հոդվածի 2–րդ մասի 6-8–րդ կետերով նախատեսվում է, որ մեղադրյալն իրավունք ունի հրաժարվել ցուցմունքներ տալուց, տալ բացատրություններ կամ մասնակցել քննչական գործողություններին, եթե սույն Օրենսգրքով այլ բան նախատեսված չէ: Համաձայն 65–րդ հոդվածի 3–րդ մասի՝ մեղադրյալի կողմից իր իրավունքներից օգտվելը չպետք է մեկնաբանվի ի վնաս նրա և նրա համար առաջացնի որևէ անբարենպաստ հետևանք: Համաձայն 65–րդ հոդվածի 4–րդ մասի՝ մեղադրյալը պարտավոր է քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել բժշկական ստուգման, մատնադրոշմման,

լուսանկարվել և հնարավորություն ընձեռել վերցնելու արյան, մարմնի արտաթորությունների նմուշներ:

53. Համաձայն 128–րդ հոդվածի՝ ձերբակալումն անձին արգելանքի վերցնելը և նրան արգելանքի տակ կարճաժամկետ պահելն է:

54. Համաձայն 129-րդ և 130-րդ հոդվածների՝ անձին կարելի է ձերբակալել. 1) հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա. կամ 2) քրեական հետապնդման մարմնի որոշման հիման վրա: Երկու դեպքերում էլ ձերբակալումը չի կարող տևել 72 ժամից ավելի՝ սկսած արգելանքի վերցնելու պահից:

55. Համաձայն 132–րդ հոդվածի 1–ին մասի 3–րդ կետի՝ ձերբակալվածը ենթակա է ազատման, եթե լրացել է ձերբակալման՝ սույն Օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը, և դատարանը մեղադրյալին կալանավորելու մասին որոշում չի կայացրել:

56. Համաձայն 134-րդ հոդվածի՝ խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են ձերբակալվածի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով: Խափանման միջոցները, մասնավորապես, ներառում են գրավը և կազմակերպության երաշխավորությունը:

57. Համաձայն 135–րդ հոդվածի՝ դատարանը խափանման միջոց կարող է կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝ 1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից. 2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով. 3) կատարել քրեական օրենքով արգելված արարք. 4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց. 5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը: Կալանավորումը և դրա այլընտրանքային խափանման միջոցը մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել միայն այնպիսի հանցագործության համար, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, կամ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է կատարել վերոնշյալ գործողությունները: Խափանման միջոց կիրառելու

անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝ 1) վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը. 2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը. 3) տարիքը և առողջական վիճակը. 4) սեռը. 5) զբաղմունքի տեսակը. 6) ընտանեկան դրությունը և խնամարկյալների առկայությունը. 7) գույքային դրությունը. 8) բնակության մշտական վայրի առկայությունը. 9) այլ էական հանգամանքներ:

58. Համաձայն 136–րդ հոդվածի 2–րդ մասի՝ կալանավորումը և գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ կամ դատարանի սեփական նախաձեռնությամբ՝ դատարանում քրեական գործը քննելիս: Գրավը կալանավորման փոխարեն դատարանը կարող է կիրառել նաև պաշտպանության կողմի միջնորդությամբ:

59. Համաձայն 137–րդ հոդվածի 4–րդ մասի՝ կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը:

60. Համաձայն 138–րդ հոդվածի 5–րդ մասի՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատարան:

61. 139–րդ հոդվածի 1–ին մասով սահմանվում է, որ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում քննիչը կամ դատախազը, ոչ ուշ, քան կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց տաս օր առաջ, պետք է դատարան ներկայացնեն պատճառաբանված միջնորդություն: Դատարանը, համաձայնվելով կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտությանը, ոչ ուշ, քան դատարանի կալանքի տակ պահելու որոշած ժամկետը լրանալուց հինգ օր առաջ, համապատասխան որոշում է կայացնում:

62. 143–րդ հոդվածի 1–ին մասով սահմանվում է, որ գրավը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է:

63. Համաձայն 201–րդ հոդվածի 1–ին մասի՝ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ:

64. Համաձայն 288–րդ հոդվածի 1–ին մասի՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է Վերաքննիչ դատարանի կողմից:

65. Համաձայն 285–րդ հոդվածի 1–ին մասի՝ կալանքը ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնգելու՝ դատախազի կամ քննիչի միջնորդության մեջ պետք է շարադրվեն այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտություն: Միջնորդությանը կցվում են դրա հիմնավորվածությունը հաստատող նյութերը:

2. Քրեական գործով վարույթի կասեցումը

66. Համաձայն 31–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ և 5–րդ կետերի՝ քրեական գործով վարույթը դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ ամբողջությամբ կամ համապատասխան մասով կարող է կասեցվել, եթե մեղադրյալը թաքնվել է քննությունից կամ դատից և եթե գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին:

67. Համաձայն 31–րդ հոդվածի 5–րդ մասի՝ քրեական գործով վարույթը կասեցվում է՝ մինչև այն կասեցնելու հիմք ծառայած հանգամանքները վերացնելը: Դրանց վերացումից հետո այն վերսկսվում է դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ:

3. Փոխհատուցում

68. Համաձայն 66–րդ հոդվածի 3–րդ մասի՝ արդարացվածն իրավունք ունի նաև պահանջել իրեն անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով պատճառված գույքային հատուցում ամբողջ ծավալով՝ հաշվի առնելով իրական հնարավոր բաց թողնված օգուտները:

Դ. Քաղաքացիական օրենսգիրք (ուժի մեջ է 1999 թվականի հունվարի 1–ից)

69. 17-րդ հոդվածով նախատեսվում է, որ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված

եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

70. 1064–րդ հոդվածով նախատեսվում է, որ ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից:

Ե. Դատարանների նախագահների խորհրդի 2000 թվականի փետրվարի 12–ի թիվ 20 որոշումը

71. Սույն որոշման 4–րդ կետում ամրագրված էր, որ ՔԴՕ–ի 137–րդ հոդվածի 5–րդ մասով սահմանվում է, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատարան: Այնուամենայնիվ ՔԴՕ–ի մեջ չի նախատեսվում կալանավորումը կիրառող և կալանավորման ժամկետը երկարաձգող՝ Վերաքննիչ դատարանի որոշումների օրինականությունը և հիմնավորվածությունը վիճարկելու ընթացակարգ: Ուստի այդպիսի դեպքերում Վերաքննիչ դատարանի որոշումները կարող են վիճարկվել Վճռաբեկ դատարանում:

Զ. Դատարանների նախագահների խորհրդի 2005 թվականի դեկտեմբերի 8–ի թիվ 83 որոշումը

72. Համաձայն այս որոշման՝ Դատարանների նախագահների խորհրդի 2000 թվականի փետրվարի 12–ի թիվ 20 որոշումը պետք է ուժը կորցրած ճանաչվի՝ հաշվի առնելով, որ համաձայն Սահմանադրության 92–րդ հոդվածի, Վճռաբեկ դատարանը, որպես բարձրագույն դատական ատյան, կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը:

Է. Դատարանների նախագահների խորհրդի 2006 թվականի ապրիլի 5–ի թիվ 96 որոշումը

73. Սույն որոշմամբ ամրագրվում է Դատարանների նախագահների խորհրդի 2000 թվականի փետրվարի 12–ի թիվ 20 որոշման 4–րդ կետի նոր խմբագրությունը, որով նախատեսվում է, որ համաձայն Սահմանադրության 92–րդ հոդվածի՝ բարձրագույն դատական ատյանը Վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ

կիրառությունը: Նման հանգամանքներում, մինչդատական վարույթի ընթացքում ընդունված որոշումների դեմ՝ ներառյալ կալանավորման վերաբերյալ որևէ որոշման դեմ բարձրագույն դատական ատյան բերված բողոքը չի բխում դրա սահմանադրական կարգավիճակից: Այդպիսի բողոքները չպետք է քննվեն: Բացառիկ դեպքերում այդ բողոքները կարող է քննել Վճռաբեկ դատարանը, եթե դրանց մեջ արծարծվում են դատական պրակտիկայի համար կարևորություն ունեցող հարցեր: Միաժամանակ, կարող են բողոքարկվել Վերաքննիչ դատարանի այն որոշումները, որոնցով անփոփոխ են թողնվել առաջին ատյանի դատարանների՝ կալանավորման մասին որոշումները:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ի. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

74. Դիմումատուն բողոքել է, որ նրա ազատության իրավունքը խախտվել է կալանավորման հարցով առաջին դատական նիստի ընթացքում և որ 2006 թվականի դեկտեմբերի 2–ին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելը չէր կատարվել օրենքով սահմանված ժամկետներում: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 1–ին կետը, որը համապատասխանաբար սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով...»

Ա. Ընդունելիությունը

1. Ներպետական իրավունքով նախատեսվող ժամկետների պահպանումը՝ կալանավորման ժամկետը երկարացնելիս

ա) Կողմերի փաստարկները

75. Կառավարությունը փաստել է, որ 2005 թվականի նոյեմբերի 28–ին դիմումատուի կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդություն ներկայացնելիս՝ քննիչը պահպանել էր ՔԴՕ–ի 139-րդ հոդվածի 1–ին կետով սահմանված ժամկետը: Համաձայն ՔԴՕ–ի 173–րդ հոդվածի 3-րդ մասի՝ ժամկետը սկսվում է առաջին օրվա կեսօրին՝ ժամը 12:00–ին և լրանում է ժամկետի վերջին օրվա կեսգիշերին՝ ժամը 12:00–ին: Ավելին, համաձայն նույն հոդվածի, եթե ժամկետի լրանալը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի վերջին օրը

հաշվվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Դիմումատուի կալանքի ժամկետը պետք է ավարտվեր 2005 թվականի դեկտեմբերի 7-ին: Քննիչը պետք է միջնորդություն ներկայացներ 2005 թվականի նոյեմբերի 27–ին, սակայն քանի որ այդ օրը կիրակի էր, նա այն ներկայացրել էր 2005 թվականի նոյեմբերի 28–ին: Հետևաբար, 5–րդ հոդվածի 1–ին կետի խախտում տեղի չի ունեցել:

76. Դիմումատուն փաստել է, որ Կառավարությունը սխալ է մեկնաբանել ՔԴՕ–ի 173–րդ հոդվածի 3–րդ մասը և որ քննիչը միջնորդություն պետք է ներկայացներ 2005 թվականի նոյեմբերի 26–ին՝ այլ ոչ թե 2005 թվականի նոյեմբերի 28–ին՝ ՔԴՕ–ի 139–րդ հոդվածի 1–ին մասով սահմանված ժամկետը պահպանելու համար: Առաջին ատյանի դատարանի՝ 2005 թվականի դեկտեմբերի 2-ի որոշումը նույնպես կայացվել է մեկ օր ուշացումով: Այսպիսով ո՛չ քննիչը, և ո՛չ դատարանը չեն պահպանել ՔԴՕ–ի 139-րդ հոդվածի 1–ին մասով սահմանված պահանջները՝ կապված դիմումատուի կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հետ, որի արդյունքում տեղի է ունեցել 5–րդ հոդվածի 1–ին կետի խախտում:

բ) Դատարանի գնահատականը

77. Դատարանը վերահաստատում է, որ 5–րդ հոդվածի 1–ին կետում առկա «օրինական» և «օրենքով սահմանված կարգով» արտահայտությունները ըստ էության հղում են կատարում ներպետական իրավունքին և ամրագրում են այդ իրավունքի նյութաիրավական և ընթացակարգային պահանջները պահպանելու պարտավորությունը: Չնայած այն հանգամանքին, որ ներպետական իրավունքի մեկնաբանման և կիրառման հարցը ներպետական իշխանությունների, մասնավորապես՝ դատարանների առաջնային պարտավորությունն է, 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ներպետական իրավունքի պահանջները չպահպանելը Կոնվենցիայի խախտում է և Դատարանը կարող է և պետք է քննի, թե արդյոք այդ ներպետական իրավունքի պահանջները պահպանվել են (տե՛ս, ի թիվս այլոց, *Benham v. the United Kingdom*, 1996 թվականի հունիսի 10, § 41, Զեկույցներ վճիռների և որոշումների մասին 1996-III, և *Assanidze v. Georgia* [ՄՊ], թիվ 71503/01, § 171, ՄԻԵԿ 2004-II)**:** Կալանքի տակ պահելու ժամկետը սկզբունքորեն «օրինական» է, եթե այն հիմնվում է դատարանի որոշման վրա: Նույնիսկ կալանավորման մասին որոշման թերություններն անհրաժեշտաբար չեն հանգեցնում կալանքի տակ պահելու հիմնական ժամկետի անօրինականությանը 5–րդ հոդվածի 1–ին կետի իմաստով (տե՛ս վերոնշյալ *Benham* գործը, §§ 42-47, և *Jėčius v. Lithuania*, թիվ 34578/97, § 68, ՄԻԵԿ 2000-IX):

78. Սույն գործում դատարանի կողմից որոշված՝ դիմումատուին երկամսյա կալանքի տակ պահելու ժամկետը պետք է լրանար 2005 թվականի դեկտեմբերի 7–ին: ՔԴՕ–ի 139–րդ հոդվածի 1-ին մասով պահանջվում է, որ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում քննիչը, ոչ ուշ քան կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց տաս օր առաջ, պետք է դատարան ներկայացնի միջնորդություն և դատարանը, ոչ ուշ քան կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց հինգ օր առաջ համապատասխան որոշում է կայացնի: Դիմումատուի գործում քննիչը կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդություն է ներկայացրել 2005 թվականի նոյեմբերի 28–ին, մինչդեռ առաջին ատյանի դատարանը միջնորդությունը բավարարող և դիմումատուին կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամսով երկարացնելու իր որոշումն ընդունել էր 2005 թվականի դեկտեմբերի 2–ին: Դատարանը չի գտնում, որ անհրաժեշտ է որոշել, թե արդյոք այդպես վարվելով՝ քննիչը և առաջին ատյանի դատարանը պահպանել են ՔԴՕ–ի 139 հոդվածի 1–ին մասով սահմանված ժակմետները՝ հետևյալ պատճառներով:

79. Դատարանը նշում է, որ այն ժամանակ, երբ առաջին ատյանի դատարանը 2005 թվականի դեկտեմբերի 2–ին որոշում էր կայացրել դիմումատուի կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին, առաջին ատյանի դատարանի նախորդ, այն է՝ 2005 թվականի հոկտեմբերի 11–ի որոշման հիման վրա դիմումատուի ընթացիկ կալանքը դեռ ուժի մեջ էր: Ավելին, նույնիսկ ենթադրելով, որ 2005 թվականի դեկտեմբերի 2–ի որոշումը կայացվել էր մեկ օրվա ուշացումով՝ այն, այնուամենայնիվ, կայացվել էր կալանքի տակ պահելու թույլատրված ժամկետը լրանալուց մի քանի օր առաջ: Այն ընդունվել էր իրավասու դատարանի կողմից՝ քննիչի միջնորդության հիման վրա՝ համաձայն ներպետական իրավունքի պահանջների: Դատարանը համարում է, որ գործի փաստական հանգամանքներում, ենթադրյալ ընթացակարգային թերությունները, այն է՝ քննիչի միջնորդությունը ներկայացնելու և քննության առնելու կարճատև ձգձգումներ, ենթադրելով, որ դրանք տեղի էին ունեցել, այնքանով էին կրում ձևական և աննշան բնույթ, որ ոչ մի կերպ չէին կարող ազդել այդ որոշմամբ թույլատրված կալանքի ժամկետի օրինականության վրա:

80. Այստեղից հետևում է, որ գանգատի այս մասն ակնհայտորեն անհիմն է և պետք է մերժվի համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3–րդ կետի «ա» ենթակետի և 4-րդ կետի:

2. 2005 թվականի հոկտեմբերի 10-ից 11–ը կալանավորման հարցի վերաբերյալ առաջին նիստը

81. Դատարանը նշում է, որ այս բողոքն ակնհայտորեն անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3–րդ կետի (ա) ենթակետի իմաստով: Այն նաև նշում է, որ գանգատն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

ա) Կառավարությունը

82. Կառավարությունը փաստել է, որ դիմումատուին տարել են Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան 2005 թվականի հոկտեմբերի 10–ին, ժամը 20:20–ին՝ մինչև ձերբակալման 72 ժամը լրանալը: Առաջին ատյանի դատարանում նիստը երկար է տևել, որովհետև գործով մասնակցում էր տաս որակավորված փաստաբաններ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացրել է զգալի թվով միջնորդություններ: Այն պահից, երբ դիմումատուի ձերբակալման 72 ժամը լրացել էր 2005 թվականի հոկտեմբերի 10–ին, ժամը 22:50–ին մինչև այն պահը, երբ առաջին ատյանի դատարանը 2005 թվականի հոկտեմբերի 11–ին, ժամը 5:05–ին որոշում էր կայացրել, դիմումատուն չէր կարող համարվել ազատությունից զրկված անձ: Դիմումատուին չի թույլատրվել դուրս գալ դատական նիստերի դահլիճից, քանի որ որպես մեղադրյալ նա պարտավոր էր մասնակցել նիստին և դատական նիստերի դահլիճը չլքել առանց դատավորի թույլտվության մինչև ընդմիջում հայտարարելը՝ համաձայն ՔԴՕ–ի 65–րդ հոդվածի 4–րդ մասի 6–րդ կետի: Նիստի ժամանակ ընդմիջում չի հայտարարվել, և այն պահը, երբ դատավորը հեռացել էր խորհրդակցական սենյակ, չէր կարող համարվել ընդմիջում:

բ) Դիմումատուն

83. Դիմումատուն նշել է, որ այսպես կոչված «խորհրդակցական սենյակը» իրականում դատավորի աշխատասենյակն էր: Դատավորը սենյակից դուրս չի եկել, իսկ դատավարության մասնակիցներին խնդրել են դուրս գալ աշխատասենյակից այն ժամանակ, երբ դատավորը քննարկում էր այս կամ այն հարցը: Այդպիսի յուրաքանչյուր դեպքում նա շրջապատված է եղել չորս ոստիկաններով փոքր սենյակում, որը ծառայում էր որպես դատավորի ընդունարան, մինչդեռ մյուսները կարող էին ազատ դուրս գալ: ՔԴՕ–ի 129–րդ հոդվածի 2–րդ մասով չի

թույլատրվում երկարաձգել ձերբակալման 72 ժամը: Դիմումատուն պաշտոնապես ձերբակալվել է 2005 թվականի հոկտեմբերի 7–ին, ժամը 21:50–ին և թույլատրված ձերբակալման ժամկետը լրացել է 2005 թվականի հոկտեմբերի 10-ին, ժամը 21:50–ին: Չնայած այս հանգամանքին, դատավորը շարունակել է վերաբերվել դիմումատուին որպես կալանավորված անձի: Համաձայն ՔԴՕ–ի 65–րդ հոդվածի 4–րդ մասի 6–րդ կետի՝ քննարկումների ժամանակ դիմումատուն պարտավոր էր մնալ «դատական նիստերի դահլիճում», սակայն նրա փաստաբաններին թույլատրվել է նույն ընդմիջումներին լքել դահլիճը, մինչդեռ ՔԴՕ–ի 73-րդ հոդվածի 5–րդ մասի 3-րդ կետի համաձայն նրանք նույնպես պարտավոր էին չլքել նիստերի դահլիճը: Հետևաբար, ներպետական որևէ դրույթի վրա չհիմնված Կառավարության պնդումը այն մասին, որ ընդմիջումը այդպիսին համարվելու համար պետք է հայտարարվեր, մոլորեցնելու նպատակ է հետապնդում: Ավելին, դատավորը նիստի ամբողջ ընթացքում միտումնավոր խուսափել է դիմումատուի ազատության հարցի վերաբերյալ որոշում կայացնելուց՝ այդպիսով զրկելով նրան ընդմիջումների ընթացքում ոստիկանության աշխատակիցների կողմից ազատ արձակվելու հնարավորությունից: Սա նաև մատնացույց է արել դիմումատուի ազատության հանդեպ դատավորի ընդհանուր անհարգալից վերաբերմունքը: Ի վերջո, նա ազատությունից զրկվել էր դատական նիստի ընթացքում, որը Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 1–ին կետի խախտում է:

2. Դատարանի գնահատականը

84. Դատարանը ևս մեկ անգամ հաստատում է, որ ցանկացած կալանավորում պետք է լինի օրինական: Ավելին, անձին ազատությունից զրկող ցանկացած միջոց պետք է համապատասխանի 5-րդ հոդվածի նպատակին, այն է՝ անձին պաշտպանել կամայականությունից (տե՛ս *Winterwerp v. the Netherlands*, 1979 թվականի հոկտեմբերի 24, § 39, թիվ 33, շարք «Ա», և *Lukanov v. Bulgaria*, 1997 թվականի մարտի 20, § 41, Վճիռների և որոշումների մասին զեկույցներ 1997-II):

85. Երբ քննարկվում է ազատությունից զրկելու հարցը, հատկապես կարևոր է, որ պահպանվի իրավական որոշակիության ընդհանուր սկզբունքը: Հետևաբար, էապես կարևոր է, որ ներպետական իրավունքով ճշգրիտ սահմանված լինեն ազատությունից զրկելու պայմանները և օրենքն ինքնին կանխատեսելի լինի կիրառության առումով, որպեսզի կհամապատասխանի Կոնվենցիայով սահմանված «օրինականության» չափանիշին, համաձայն որի պահանջվում է, որ ցանկացած օրենք լինի բավարար չափով ճշգրիտ, որպեսզի ցանկացած ոք, անհրաժեշտության դեպքում համապատասխան

խորհրդատվությամբ, հնարավորություն ունենա կանխատեսել իր գործողությունների հնարավոր հետևանքները՝ որքանով դա ողջամտորեն հնարավոր է տվյալ իրավիճակում (տե՛ս *Steel and Others v. the United Kingdom*, 1998 թվականի սեպտեմբերի 23, § 54, Վճիռների և որոշումների մասին զեկույցներ 1998-VII):

86. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Դատարանը նշում է, որ դիմումատուն պաշտոնապես ձերբակալվել է 2005 թվականի հոկտեմբերի 7–ին, ժամը 21:50-ին: Համաձայն ներպետական իրավունքի՝ այս ձերբակալումը 72 ժամից ավել չէր կարող տևել և ձերբակալվածը պետք է ազատ արձակվեր, եթե լրացել էր ձերբակալման առավելագույն ժամկետը և դատարանը դիմումատուին կալանավորելու մասին որոշում չէր կայացրել (ՔԴՕ–ի 129–րդ հոդվածի 2–րդ մաս և 132–րդ հոդվածի 1–ին մասի 3–րդ կետ): Այնուամենայնիվ, Դատարանը նշում է, որ 2005 թվականի հոկտեմբերի 10–ին, մոտավորապես ժամը 20:20–ին՝ դիմումատուի՝ կարճաժամկետ ձերբակալման ժամկետը լրանալուց մեկ և կես ժամ առաջ դիմումատուն տարվել է դատավորի մոտ, որպեսզի վերջինս որոշում կայացնի դիմումատուին կալանավորելու վերաբերյալ: Այսպիսով, իշխանությունները կատարել են իրենց պարտավորությունը և դիմումատուն տարվել է դատավորի մոտ օրենքով թույլատրված 72-ժամյա ժամկետում: Ճիշտ է, որ նիստի տևողությունն այդ երեկո հատել է 21:50–ի սահմանը, այսինքն՝ 72–ժամյա սահմանը, և տևել է մինչև հաջորդ օրվա 5:05–ը՝ այն պահը, երբ դատավորը, հայտարարելով դիմումատուին կալանավորելու մասին որոշումը, փակված է համարել դատական նիստը (տե՛ս վերոնշյալ 20–րդ կետը), որի ընթացքում չեն հայտարարվել ընդմիջումներ, և դիմումատուն պարտավորված է եղել մնալ դատական նիստերի դահլիճում: Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ, քանի որ դիմումատուին տարել են դատավորի մոտ օրենքով սահմանված 72 ժամվա ընթացքում, պահանջը, որ դիմումատուն ներկա լինի այդ նիստին մինչև վերջինիս կալանավորման հարցը լուծվի դատարանի կողմից, չի խախտել Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 1–ին կետում ամրագրված երաշխիքները: Հարկ է նշել նաև, որ Դատարանը չի կարող անտեսել այն փաստը, որ դիմումատուին ներկայացնում էին թվով տաս փաստաբաններ, որոնց կողմից բերված բազմաթիվ միջնորդությունները և առարկությունները հանգեցրել էին գործի քննության ձգձգման: Այսպիսով, այն հանգամանքը, որ 2005 թվականի հոկտեմբերի 10–ին դատական նիստը հատել է 21:50–ի սահմանը, չի կարող վերագրվել դատավորին, որը բարեխղճորեն է քննության առել գործը:

87. Համապատասխանաբար, Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 1–ին կետի խախտում տեղի չի ունեցել:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5–ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3–ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

88. Դիմումատուն բողոքել է, որ կալանավորման հարցով 2005 թվականի հոկտեմբերի 10-ից 11–ը կայացած առաջին նիստի ընթացքում չեն պահպանվել ընթացակարգային պահանջները, դատարանները չեն կարողացել ներկայացնել դիմումատուի՝ շարունակական կալանքի վերաբերյալ հիմնավոր և բավարար պատճառներ, և որ օրենքը խոչընդոտում էր դիմումատուին կալանքից գրավով ազատելու հնարավորությանը՝ հաշվի առնելով դիմումատուին վերագրվող հանցանքի ծանրության աստիճանը: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 3–րդ կետը, որը սահմանում է.

«3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

Ա. Կալանավորման հարցով 2005 թվականի հոկտեմբերի 10-ից 11–ը կայացած առաջին նիստի ընթացակարգային հարցերը

1. Կողմերի փաստարկները

89. Կառավարությունը փաստել է, որ կալանավորման հարցով առաջին նիստը անցկացվել է 5–րդ հոդվածի 3–րդ կետի ընթացակարգային պահանջներին համապատասխան: Սույն Հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես մրցակցության և կողմերի հավասարության իրավունքը երաշխավորող հոդված: Այս Հոդվածի հիմնական նպատակը ազատությունից զրկված անձանց համար դատական բնույթի ընթացակարգ ապահովելն է, որպեսզի ոչ ոք չզրկվի ազատությունից կամայականորեն և որ ազատությունից զրկելու այդպիսի դեպքերը հասցվեն նվազագույնի: Մեղադրյալին իրավունք է տրվել ծանոթանալ գործի բոլոր նյութերին միայն նախաքննության ավարտից հետո: Այսպիսով, այն հանգամանքը, որ դիմումատուին և նրա փաստաբաններին չի թույլատրվել ծանոթանալ 2005 թվականի

հոկտեմբերի 10–ին քննիչի կողմից ի հիմնավորումն իր բերված միջնորդությանը ներկայացված նյութերին, չի խախտում ո՛չ ներպետական իրավունքը, ո՛չ էլ 5–րդ հոդվածի 3–րդ կետը:

90. Դիմումատուն պնդել է, որ 5–րդ հոդվածի 3–րդ կետն ամրագրում է միևնույն երաշխիքները, ինչ՝ 5–րդ հոդվածի 4–րդ կետը: Ավելին, 2005 թվականի հոկտեմբերի 27–ի իր որոշման մեջ Վերաքննիչ դատարանը գտել է, որ առաջին ատյանի դատարանը չի խախտել Կոնվենցիայով սահմանված՝ կողմերի հավասարության և մրցակցության պահանջները՝ այդպիսով ընդունելով, որ նմանօրինակ երաշխիքները կիրառելի էին կալանավորման հարցով դատական առաջին նիստի դեպքում: Այսպիսով, նիստերն ընթացել են՝ 5–րդ հոդվածի 3–րդ կետով նախատեսված երաշխիքների խախտմամբ, դրանք են՝ կողմերի հավասարության և իր պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու երաշխիքները: Մասնավորապես, նախագահող դատավորը դիմումատուին և նրա փաստաբաններին չի թույլատրել ծանոթանալ քննիչի կողմից դատավորին ներկայացված գործի նյութերի երկու հատորներին. դիմումատուին և նրա փաստաբաններին տրվել է ընդամենը 10 րոպե՝ ծանոթանալու քննիչի՝ 2005 թվականի հոկտեմբերի 10–ի միջնորդությանը և համաձայնեցնելու իրենց դիրքորոշումը. դիմումատուին և նրա փաստաբաններին չի թույլատրվել խորհրդապահական կարգով խորհրդակցել գործը քննարկելու նպատակով:

2. Դատարանի գնահատականը

91. Դատարանը վերահաստատում է, որ 5–րդ հոդվածի 3–րդ կետը կառուցվածքային առումով վերաբերում է երկու առանձին հարցերի՝ ձերբակալմանը հաջորդող վաղ փուլերը, երբ անձը վերցվում է իշխանությունների իրավասության ներքո, և քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքը, երբ կասկածյալը կարող է կամ կալանքի տակ պահվել, կամ որոշակի պայմաններով կամ առանց պայմանների ազատ արձակվել: Այս երկու տարրերը առանձին իրավունքներ են վերապահում, որոնք տրամաբանական կամ ժամանակագրական առումներով առերևույթ կապակցված չեն (տե՛ս *T.W. v. Malta* [ՄՊ], թիվ 25644/94, §49, 1999 թվականի ապրիլի 29, և *McKay v. the United Kingdom* [ՄՊ], թիվ 543/03, §31, ՄԻԵԿ 2006-X):

92. Դատարանի նախադեպային իրավունքը, քննարկելով ձերբակալմանը հաջորդող վաղ փուլերը որպես 5–րդ հոդվածի 3–րդ կետի ներքո առաջին տարր, սահմանում է, որ հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով ձերբակալված կամ կալանավորված անձը

պետք է ստանա պաշտպանություն դատական վերահսկողության միջոցով, որը պետք է բավարարի հետևյալ պահանջները:

93. Առաջին, ձերբակալվածի՝ առաջին անգամ ներկայացվելու մասով դատական վերահսկողությունը պետք է նախևառաջ իրականացվի հնարավորինս սեղմ ժամկետում, որպեսզի հնարավորություն ընձեռնվի բացահայտել վատ վերաբերմունքի ցանկացած դեպք և նվազագույնի հասցվի անձի ազատությանը չհիմնավորված միջամտության դեպքերը (տե՛ս *Jėčius v. Lithuania*, թիվ 34578/97, § 84, ՄԻԵԿ 2000;IX, և *McKay,* վերևում մեջբերված, § 33): Երկրորդ, կալանավորման նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է ինքնաբերաբար կատարվի (տե՛ս *Aquilina v. Malta* [ՄՊ], թիվ 25642/94, 49 կետ, ՄԻԵԿ 1999-III, և *McKay*, վերևում մեջբերված, § 34): Վերջապես, դատական պաշտոնյան պետք է ապահովված լինի գործադիր իշխանությունից և կողմերից անկախ լինելու համար անհրաժեշտ երաշխիքներով (տե՛ս *Assenov and Others v. Bulgaria,* 1998 թվականի հոկտեմբերի 28, § 146, Զեկույցներ 1998-VIII): Դատական պաշտոնյան պետք է անձամբ լսի իր մոտ բերված անձին (տե՛ս *Schiesser v. Switzerland*, 1979 թվականի դեկտեմբերի 4, §31, շարք «Ա», թիվ 34) և պետք է վերանայի կալանավորումը խոչընդոտող կամ դրան նպաստող փաստական հանգամանքները՝ իրավական չափորոշիչներին հղում անելով՝ որոշելու, թե արդյոք առկա են կալանավորումը հիմնավորող պատճառներ և արդյոք հնարավոր է ազատ արձակել նման պատճառների բացակայության դեպքում (տե՛ս *Aquilina*, վերևում մեջբերված, § 47):

94. Սույն գործում դիմումատուն 5–րդ հոդվածի 3–րդ կետով ամրագրված վերոնշյալ որևէ երաշխիքի խախտման վերաբերյալ որևէ բողոք չի ներկայացրել: Այնուամենայնիվ, նա պնդել է, որ տեղի է ունեցել սույն Հոդվածի խախտում, քանի որ դիմումատուին և նրա փաստաբաններին չի թույլատրվել ծանոթանալ դատավորին ներկայացված՝ գործի նյութերի երկու հատորներին և նրանք քիչ ժամանակ են ունեցել քննիչի միջնորդությանը ծանոթանալու և իրենց դիրքորոշումը համաձայնեցնելու համար: Կառավարությունն ընդունել է, որ սա համապատասխանում է իրականությանը: Դատարանը համարում է, որ այս իրավիճակը, մեղադրանքի կողմի համեմատությամբ, չի առաջացրել անբարենպաստ պայմաններ պաշտպանության կողմի համար, քանի որ վերջինս կարողացել է առնվազն բանավոր կերպով ներկայացնել իր փաստարկները: Կալանավորման հարցով առաջին նիստի բնույթն այնպիսին է, որ այն ուղղված է գործի նյութերը քննության առնելու և փաստարկները կազմելու համար ժամանակը նվազագույնի հասցնելուն, որպեսզի դատարանին հնարավորություն տրվի որոշումը կայացնել «անհապաղ»՝ համաձայն 5–րդ հոդվածի

պահանջի (տե՛ս *Khodorkovskiy v. Russia*, թիվ 5829/04, §221, 2011 թվականի մայիսի 31):

95. Այստեղից հետևում է, որ գանգատի այս մասն ակնհայտորեն անհիմն է և պետք է մերժվի համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3–րդ կետի (ա) ենթակետի և 4-րդ կետի:

Բ. Գրավով ազատելու անթույլատրելիությունը

1. Կողմերի փաստարկները

96. Կառավարությունը պնդել է, որ ներպետական դատարանները հրաժարվել են դիմումատուին գրավով ազատել ոչ թե ՔԴՕ–ի 143–րդ հոդվածի 1–ին մասով կիրառվող սահմանափակումների պատճառով, այլ այն պատճառով, որ եղել են բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ դիմումատուն կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից և խոչընդոտել գործի քննությանը: Հետևաբար, դիմումատուի գործում չի կիրառվել ՔԴՕ–ի 143–րդ հոդվածի 1–ին մասը:

97. Դիմումատուն նշել է, որ ներպետական դատարանները իրենց կողմիվ կայացրած որևէ որոշմամբ չեն անդրադարձել գրավով ազատվելու վերաբերյալ նրա դիմումին: Նրանք չեն լուծել նաև գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը՝ համաձայն 137–րդ հոդվածի 4–րդ մասի պահանջի: Այսպիսով, դատարաններն անկասկած այդպես են վարվել սույն գործի նկատմամբ՝ ինքնըստինքյան կիրառելով ՔԴՕ–ի 143–րդ հոդվածի 1–ին մասը, քանի որ դիմումատուին մեղսագրվող արարքներից մեկը դասակարգվում էր ծանր հանցագործությունների տեսակին՝ համաձայն ՔՕ–ի 19–րդ հոդվածի դրույթների: Գրավի կիրառման նման ինքնաբերական մերժումը 5–րդ հոդվածի 3–րդ կետի խախտում է:

2. Դատարանի գնահատականը

98. Դատարանը նշում է, որ նախկինում 5–րդ հոդվածի 3–րդ կետի խախտում է արձանագրվել մի շարք դեպքերում, որտեղ գրավի կիրառման մասին դիմումը ինքնաբերաբար մերժվել է օրենքի ուժով (տե՛ս *Caballero v. the United Kingdom* [ՄՊ], թիվ 32819/96, § 21, ՄԻԵԿ 2000-II, և *S.B.C. v. the United Kingdom*, թիվ 39360/98, §§23-24, 2001 թվականի հունիսի 19):

99. Սույն գործում դիմումատուն նմանատիպ հայտարարություն է արել առ այն, որ նրան գրավով ազատելու հարցը չի դիտարկվել ՔԴՕ–ի 143–րդ հոդվածի 1–ին մասի կիրառմամբ, որն արգելում է ծանր կամ

առանձնապես ծանր հանցագործություններում մեղադրվող անձանց ազատել գրավի կիրառմամբ: Դատարանը կանդրադառնա դիմումատուի մասնավոր հարցի պնդմանը:

100. Հաշվի առնելով գործի փաստական հանգամանքները՝ Դատարանը առաջին հերթին նշում է, որ գործի նյութերում չեն եղել այնպիսի փաստաթղթեր, որոնք թույլ կտային ենթադրել, որ դիմումատուն երբևէ դիմում է ներկայացրել գրավով կալանքից ազատվելու վերաբերյալ: Ճիշտ է, որ ներպետական դատարանները չեն անդրադարձել գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցին, ինչը ակնկալվում էր նրանցից ՔԴՕ–ի 137-րդ հոդվածի 4–րդ մասի համաձայն: Այնուամենայնիվ, Դատարանի պարտականությունների մեջ չի մտնում այս բացթողման հնարավոր պատճառների մասին եզրակացություն անելը և պարզելը, թե արդյոք այդ բացթողումների համար պատճառ են հանդիսացել ՔԴՕ–ի 143–րդ հոդվածի 1–ին մասով սահմանված սահմանափակումները: Այսպիսով, հնարավոր չէ բավարար վստահությամբ ասել, որ այս հոդվածը կիրառվել է դիմումատուի գործում: Նման հանգամանքներում Դատարանը գտնում է, որ դիմումատուն չի կարող պնդել, թե զոհ է 5–րդ հոդվածի 3–րդ կետի ենթադրյալ խախտման՝ տվյալ հատուկ հիմքի ներքո:

101. Դրանից հետևում է, որ գանգատի այս մասը *ratione personae* հիմքով անհամատեղելի է և պետք է մերժվի համաձայն Կոնվենցիայի 35–րդ հոդվածի 3–րդ կետի (ա) ենթակետի և 4–րդ կետի:

Գ. Դիմումատուի շարունակական կալանքի պատճառների ենթադրյալ բացակայությունը

1. Կողմերի փաստարկները

102. Կառավարությունը փաստել է, որ ներպետական իշխանությունները ներկայացրել են դիմումատուի շարունակական կալանքի համար հիմնավոր և բավարար պատճառներ: Քննիչը ներկայացրել է հիմնավորված միջնորդություն, որին կցված են եղել բազմաթիվ նյութեր: Դատարանները բավարարել են այդ միջնորդությունը՝ գտնելով, որ դիմումատուն կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ խոչընդոտել գործի քննությանը: Այսպիսով, դատարանները կատարել են իրենց պարտավորությունը կալանքի համար հիմնավոր և բավարար պատճառներ ներկայացնելու մասով:

103. Դիմումատուն նշել է, որ ներպետական դատարանները չեն ներկայացրել նրա շարունակական կալանքի հիմքերը, և դատարանների կողմից տրված պատճառաբանությունը, ըստ էության, հիմնականում համապատասխան իրավական դրույթների մեջբերում էր՝ առանց դիմումատուի անհատական իրավիճակի գնահատման կամ առանց այն որևէ փաստական հիմքով հիմնավորելու: Ազատ արձակվելու մասին դիմումատուի բոլոր փաստարկները դատարաններն անտեսել էին:

2. Դատարանի գնահատականը

104. Իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող անձը պետք է միշտ ազատ արձակվի մինչդատական վարույթում, եթե բացառությամբ այն դեպքերի, երբ պետությունը կարող է ցույց տալ, որ գոյություն ունեն «հիմնավոր և բավարար» հիմքեր շարունակական կալանավորման համար (տե՛ս *Smirnova v. Russia*, թիվ 46133/99 և 48183/99, § 58, ՄԻԵԿ 2003-IX (քաղվածքներ); *Becciev v. Moldova*, թիվ 9190/03, § 53, 2005 թվականի հոկտեմբերի 4, և *Khodorkovskiy v. Russia*, թիվ 5829/04, § 182, 2011 թվականի մայիսի 31):

105. Ներպետական դատարանները պետք է քննության առնեն բոլոր փաստերը, որոնք կողմ կամ դեմ են փաստարկում այնպիսի հանրային շահի իրական պահանջի առկայությանը, որը, հաշվի առնելով անձի անմեղության կանխավարկածի սկզբունքը, արդարացնում է անձի ազատությունը հարգելու կանոնից կատարվող շեղումը, և պետք է դրանք ամրագրեն անձին ազատ արձակելու միջնորդությունների վերաբերյալ իրենց որոշումներում (տե՛ս *Letellier v. France*, 1991 թվականի հունիսի 26, § 35, շարք «Ա», թիվ 207): Ազատ արձակելուն կողմ կամ դեմ արված փաստարկները պետք է ընդհանուր և վերացական բնույթ չունենան (տե՛ս *Clooth v. Belgium*, 1991 թվականի դեկտեմբերի 12, § 44, շարք «Ա», թիվ 225):

106. Դատարանը վերահաստատում է, որ հիմնավոր կասկածի առկայությունն առ այն, որ ձերբակալված անձը կատարել է իրավախախտում, հանդիսանում է անհրաժեշտ պայման շարունակական կալանքի օրինականության համար, սակայն որոշ ժամանակ անց դա դառնում է ոչ բավարար: Նման դեպքերում Դատարանը պետք է պարզի, թե արդյոք դատական մարմինների կողմից ներկայացված այլ հիմքերով շարունակվում է հիմնավորվել ազատությունից զրկելը: Եթե այդօրինակ հիմքերը «հիմնավոր» և «բավարար» են, Դատարանը պետք է պարզի նաև, թե քննությունն իրականացնելիս իրավասու ներպետական մարմինները արդյոք դրսևորել են «պատշաճ ջանասիրություն» (տե՛ս *Labita v. Italy* [ՄՊ], թիվ 26772/95, § 153, ՄԻԵԿ 2000-IV):

107. Սույն գործում Դատարանը նախ նշում է, որ դիմումատուի մինչդատական կալանքի տևողությունը փոքր–ինչ գերազանցել է չորս ամսյա ժամկետը՝ տևելով 2005 թվականի հոկտեմբերի 7–ից մինչև 2006 թվականի փետրվարի 15–ը, երբ Վերաքննիչ դատարանը որոշում էր կայացրել դիմումատուին ազատ արձակելու մասին: Այսպիսով, Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 3–րդ կետի համաձայն՝ դիմումատուի բողոքը վերաբերում է մինչդատական կալանքի համեմատաբար կարճ ժամանակահատվածին: Դատարանը նաև նշում է, որ ոչինչ թույլ չի տալիս ենթադրել, որ դիմումատուի կալանավորումը հիմնված չէր հիմնավոր կասկածի վրա: Ավելին, չի կարելի ասել, թե ներպետական դատարաններն ակնհայտորեն չեն ներկայացրել դիմումատուի կալանքը հիմնավորող որևէ այլ հիմքեր (մասնավորապես, տե՛ս վերոնշյալ 38-րդ կետը): Հաշվի առնելով վերոնշյալ բոլոր գործոնները՝ Դատարանը եզրակացնում է, որ Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 3–րդ կետի խախտում տեղի չի ունեցել:

108. Դրանից հետևում է, որ գանգատի այս մասն ակնհայտորեն անհիմն է և պետք է մերժվի համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3–րդ կետի (ա) ենթակետի և 4-րդ կետի:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5–ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

109. Դիմումատուն բողոքել է, որ Վճռաբեկ դատարանը մերժել է քննության առնել դիմումատուի 2005 թվականի նոյեմբերի 8–ին ներկայացված բողոքը: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 4–րդ կետը, որը սահմանում է.

«4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու, իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»:

Ա. Կողմերի փաստարկները

110. Կառավարությունը պնդել, որ դիմումատուն չի օգտվել իր՝ կալանավորման վերաբերյալ մինչդատական վարույթի ընթացքում կայացված որոշումները վճռաբեկության կարգով բողոքարկելու իրավունքից: Այդպիսի որոշումները բողոքարկելու իրավունքը սահմանված է ՔԴՕ–ի 137–րդ հոդվածի 5–րդ մասով և 288–րդ հոդվածի

1–ին մասով, որոնցով նախատեսված է Վերաքննիչ դատարան բողոք ներկայացնելու հնարավորությունը: Դիմումատուն օգտվել է այս իրավունքից: Սահմանադրության մեջ 2005 թվականի դեկտեմբերի 6–ին կատարված փոփոխությունները հանգեցրել են Վճռաբեկ դատարանի կարգավիճակի փոփոխություններին, որի դերը, համաձայն 92–րդ հոդվածի, պետք է սահմանափակվեր օրենքի միատեսակ կիրառություն ապահովելով: Հետևաբար, 2005 թվականի դեկտեմբերի 8–ին Դատարանների նախագահների խորհուրդը՝ մարմին, որին վերապահվում է ներպետական իրավունքի մասով խորհրդատվական և ոչ պարտավորեցնող մեկնաբանություն ապահովելը, ընդունել է թիվ 83 Որոշումը դատական պրակտիկան Սահմանադրության նոր դրույթներին համապատասխանեցնելու նպատակով:

111. Դիմումատուն պնդել է, որ խնդրո առարկա ժամանակահատվածում նրա՝ 2005 թվականի նոյեմբերի 8–ի վճռաբեկ բողոքը պետք է քննվեր գործի նյութերը ստանալու պահից 3 օրվա ընթացքում: Վճռաբեկ դատարանը նյութերը ստացել էր 2005 թվականի նոյեմբերի 10–ին, այսպիսով դիմումատուի բողոքը պետք է քննվեր ամենաուշը 2005 թվականի նոյեմբերի 14–ին: Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանը միտումնավոր ձգձգել էր բողոքի քննությունը մինչև Դատարանների նախագահների խորհրդի կողմից 2005 թվականի դեկտեմբերի 8–ի որոշման հրապարակումը դիմումատուի բողոքը վերադարձնելու նպատակով: Խնդրո առարկա ժամանակահատվածում, համաձայն գոյություն ունեցող պրակտիկայի, Վճռաբեկ դատարանը պարտավոր էր քննել դիմումատուի բողոքը և դատարանի կողմից բողոքը չքննելը հանգեցրել է 5–րդ հոդվածի 4–րդ կետի խախտման:

Բ. Դատարանի գնահատականը

112. Դատարանը վերահաստատում է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետը Բարձր Պայմանավորվող Պետություններին չի պարտավորեցնում ունենալ կալանքի օրինականությունը և ազատ արձակելու վերաբերյալ դիմումները քննելու իրավասությամբ օժտված երկրորդ ատյանի մարմին: Այնուամենայնիվ, այդպիսի համակարգ սահմանող պետությունը սկզբունքորեն պետք է ապահովի բողոքարկման միևնույն երաշխիքները կալանավորվածների համար, ինչ՝ առաջին ատյանի դատարաններում բողոքարկման ժամանակ (տե՛ս *Toth v. Austria*, 1991 թվականի դեկտեմբերի 12, § 84, շարք «Ա», թիվ 224): Ավելին, չնայած Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 4–րդ կետով չի երաշխավորվում կալանքի օրինականության մասին որոշումները բողոքարկելու իրավունքը, այս

դրույթի նպատակն է, որ Վերաքննիչ դատարանները պահպանեն դրույթի պահանջները, եթե բողոքարկվում է կալանքի օրինականության մասին որոշումը (տե՛ս *Rutten v. the Netherlands*, թիվ 32605/96, § 53, 2001 թվականի հուլիսի 24):

113. Դատարանը նշում է, որ սույն գործում առաջին հարցը, որին պետք է անդրադառնալ, այն է, թե արդյոք դիմումատուն, համաձայն ներպետական օրենսդրության, օգտվել է՝ նախաքննության ընթացքում իր կալանքի ժամկետը երկարացնելու մասին առաջին դատարանի որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկելու իրավունքից: Հիմք ընդունելով ներպետական օրենսդրության համապատասխան դրույթները՝ կարելի է եզրակացնել, որ ՔԴՕ–ի 137–րդ հոդվածի 5–րդ և 288–րդ հոդվածի 1–ին մասերը, որոնցով կարգավորվում է այդ հարցը, հստակ սահմանում են միայն Վերաքննիչ դատարան բողոքարկելու իրավունքը և ոչինչ չեն սահմանում Վճռաբեկ դատարանի մասին (տե՛ս վերոնշյալ 60-րդ և 64–րդ կետերը): Նույնը բխում է Դատարանների նախագահների խորհրդի 2000 թվականի փետրվարի 12-ի թիվ 20 որոշումից, որում շարադրվում է, որ Վճռաբեկ դատարան բողոքարկելու ընթացակարգը չի կարգավորվում ՔԴՕ-ով, և նշվում է, որ այդ բողոքներն, այնուամենայնիվ, պետք է քննվեն (տե՛ս վերոնշյալ 71-րդ կետը): Այսպիսով, չի կարելի ասել, թե դիմումատուն ակնհայտորեն օգտվել է քննարկվող ժամանակահատվածում կալանքի վերաբերյալ մինչդատական վարույթի ընթացքում կայացված որոշումները Վճռաբեկ դատարանում բողոքարկելու իրավունքից:

114. Փաստորեն նախքան 2005 թվականի դեկտեմբերի 6–ի սահմանադրական փոփոխությունները, այդ իրավունքը, եթե ոչ օրենքով, ապա պրակտիկայում առկա էր: Այս պրակտիկան, այնուամենայնիվ, դադարել է կիրառվել փոփոխություններից հետո, որոնցով, ի թիվս այլոց, վերաձևակերպվել է Վճռաբեկ դատարանի կարգավիճակը և դրա դերը սահմանափակվել է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելով (տե՛ս վերոնշյալ 72–րդ և 73–րդ կետերը): Դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել 2005 թվականի նոյեմբերի 18–ին, այսինքն՝ երբ այս պրակտիկան դեռևս կիրառելի էր, և բողոքը դեռևս քննության փուլում էր, երբ 2005 թվականի դեկտեմբերի 8–ին կայացվեց այս պրակտիկայի կիրառումը դադարեցնելու մասին որոշումը: Այնուամենայնիվ, Դատարանը համարում է, որ այն փաստը, որ Վճռաբեկ դատարանը նոր մոտեցում էր կիրառել դիմումատուի՝ քննության փուլում գտնվող բողոքի նկատմամբ խնդիր չի առաջացնում Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 4–րդ կետի իմաստով (տե՛ս, համապատասխան փոփոխություններով («mutatis mutandis»), *Brualla*

Gómez de la Torre v. Spain, 1997 թվականի դեկտեմբերի 19, §§32-39, Վճիռների և որոշումների մասին զեկույցներ 1997-VIII):

115. Այստեղից հետևում է, որ գանգատի այս մասն ակնհայտորեն անհիմն է և ենթակա է մերժման՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3–րդ կետի (ա) ենթակետի և 4-րդ կետի:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5–ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

116. Դիմումատուն բողոքել է, որ նա չի օգտվել ոչ նյութական վնասի փոխհատուցման կենսագործելի իրավունքից: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 5–րդ կետը, որը սահմանում է.

«5. «Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման»:

Ընդունելիությունը

117. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ ներպետական որևէ մարմնում երբեք չի բարձրացրել փոխհատուցման՝ ներառյալ ոչ նյութական վնասի փոխհատուցման հարցը 5–րդ հոդվածի ենթադրյալ խախտման առումով:

118. Դիմումատուն նշել է, որ Կառավարությունը իրավական պաշտպանության արդյունավետ որևէ միջոց չի նշել: Նա պնդել է, որ ներպետական իրավունքում փոխհատուցման կենսագործելի իրավունքի բացակայության պայմաններում գոյություն չունեին իրավական պաշտպանության միջոցներ, որոնք հնարավոր կլիներ սպառել:

119. Դատարանը անհրաժեշտ չի համարում քննության առնել այս առարկությունը, քանի որ այս գանգատը, ամեն դեպքում, ընդունելի չէ հետևյալ պատճառներով:

120. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 5–րդ կետով նախատեսված փոխհատուցման իրավունքը ենթադրում է, որ ներպետական մարմինը կամ Կոնվենցիոն հաստատությունները գտել են, որ տեղի է ունեցել այդ հոդվածի այլ որևէ կետի խախտում (տե՛ս, ի թիվս այլոց, *N.C. v. Italy* [ՄՊ], թիվ 24952/94, § 49, ՄԻԵԿ 2002-X): Սույն գործում ո՛չ ներպետական դատարանները, ո՛չ

էլ Դատարանը չեն հաստատել, որ տեղի է ունեցել նման խախտում: Այդպիսի հանգամանքներում դիմումատուն չի կարող պնդել, թե զոհ է եղել Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 5–րդ կետի ենթադրյալ խախտման արդյունքում:

121. Հետևարաբար, գանգատի այս մասը *ratione personae* հիմքով անհամատեղելի է և ենթակա է մերժման՝ համաձայն Կոնվենցիայի 35–րդ հոդվածի 3–րդ կետի (ա) ենթակետի և 4–րդ կետի:

V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6–ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

122. Դիմումատուն բողոքել է, որ նրա դեմ քրեական վարույթի տևողությունը խախտել է Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին կետի՝ «ողջամիտ ժամկետին» վերաբերող պահանջը, որը, համապատասխանաբար, սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք, ... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի ...[որևէ] դատարանի կողմից ողջամիտ ժամկետում ... դատաքննության իրավունք...»:

Ա. Ընդունելիությունը

123. Դատարանը նշում է, որ այս բողոքն ակնհայտորեն անհիմն չէ՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3–րդ կետի (ա) ենթակետի իմաստով: Դատարանը նաև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

124. Կառավարությունը պնդել է, որ Դատարանի նախադեպային իրավունքով կոնկրետ ժամկետներ չեն սահմանվում, և վարույթի տևողության ողջամտությունը պայմանավորված է գործի կոնկրետ հանգամանքներով: Ելնելով պատշաճ քննության նկատառումներից՝ հնարավոր չի եղել դադարեցնել դիմումատուի քրեական հետապնդումը՝ քննիչի՝ 2006 թվականի օգոստոսի 10–ի որոշման մեջ նշված հանգամանքների պատճառով:

125. Դիմումատուն պնդել է, որ 2006 թվականի օգոստոսի 10–ից հետո նախաքննության մարմնի կողմից որևէ գործողություն չի իրականացվել: Ավելին, քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու՝ 2005 թվականի հունիսի 10-ի և այն կասեցնելու՝ 2006

թվականի օգոստոսի 10–ի միջև ընկած ժամանակահատվածում գործի քննությունը զգալիորեն ձգձգվել է: Դիմումատուի դեմ հարուցված քրեական գործը տևել է հինգ տարուց ավելի և անորոշ էր, թե այն երբ կավարտվի, եթե առհասարակ պիտի ավարտվեր: Դիմումատուն պնդել էր, որ իշխանությունները չեն ցանկացել դադարեցնել դիմումատուի գործով քրեական հետապնդումը, այլ ցանկացել են այն օգտագործել որպես ճնշման միջոց՝ կապված դիմումատուի՝ որպես մարդու իրավունքների ոլորտում փաստաբանի գործունեության առանձնահատուկ բնույթի հետ:

2. Դատարանի գնահատականը

126. Դատարանը վերահաստատում է, որ քրեական վարույթի տևողությունը որոշելիս հաշվի առնվող ժամանակահատվածը սկսվում է այն օրվանից, երբ անձին «մեղադրանք է առաջադրվում»՝ այդ եզրույթի ինքնավար և բովանդակային իմաստով (տե՛ս, ի թիվս այլոց, *Corigliano v. Italy*, 1982 թվականի դեկտեմբերի 10, § 34, շարք «Ա», թիվ 57, և *Deweer v. Belgium*, 1980 թվականի փետրվարի 27, §§ 42, 44 և 46, շարք «Ա», թիվ 35), այն է՝ ձերբակալման օրը, տվյալ անձին՝ իրեն հետապնդելու մասին պաշտոնապես ծանուցելու օրը, կամ նախնական քննության մեկնարկի օրը (տե՛ս *Wemhoff v. Germany*, 1968 թվականի հունիսի 27, § 19, շարք «Ա», թիվ 7; *Neumeister v. Austria*, 1968 թվականի հունիսի 27, § 18, շարք «Ա», թիվ 8; և *Ringeisen v. Austria*, 1971 թվականի հուլիսի 16, § 110, շարք «Ա», թիվ 13): Այն ավարտվում է այն օրը, երբ մեղավորությունը վերջնականապես հաստատվում է կամ վարույթը կարճվում է (տե՛ս *Kalashnikov v. Russia*, թիվ 47095/99, § 124, ՄԻԵԿ 2002-VI):

127. Վարույթի տևողության ողջամտությունը գնահատվում է ելնելով քննության առարկա գործի կոնկրետ փաստական հանգամանքներից՝ հաշվի առնելով Դատարանի նախադեպային իրավունքով սահմանված չափորոշիչները, մասնավորապես՝ գործի բարդությունը, դիմումատուի վարքագիծը և իրավասու մարմինների վարքագիծը, և դիմումատուի համար ռիսկի գործոնը (տե՛ս, ի թիվս այլոց, *Pélissier and Sassi v. France* [ՄՊ], թիվ 25444/94, § 67, ՄԻԵԿ 1999-II, և *Comingersoll S.A. v. Portugal* [ՄՊ], թիվ 35382/97, § 19, ՄԻԵԿ 2000-IV):

128. Սույն գործում դիմումատուի դեմ քրեական վարույթը հարուցվել է 2005 թվականի հունիսի 10–ին: Նույնիսկ այն պայմաններում, երբ այդ պահից մինչև 2005 թվականի հոկտեմբերի 7-ին ձերբակալվելը դիմումատուն պաշտոնապես ներգրավված էր որպես վկա, քրեական գործ հարուցելու որոշման բովանդակությունից ակնհայտ է, որ դիմումատուն քրեական գործում արդեն կասկածվողի վիճակում էր:

Հետևաբար, դիտարկման ենթակա ժամկետը սկսվում է 2005 թվականի հունիսի 10-ին: Դատարանը նշում է, որ վարույթը կասեցվել էր 2006 թվականի 10–ին և դեռևս ընթացքի մեջ էր 2010 թվականի սեպտեմբերի 10–ին՝ այն ամսաթվին, երբ սույն գործով ներկայացվեց Կառավարության վերջին Առարկությունը: Դատարանին չի ներկայացվել որևէ նյութ, որը հնարավորություն է տալիս ենթադրել, որ դիմումատուի դեմ հարուցված վարույթը երբևէ, ըստ էության, ավարտվել է: Այսպիսով, Դատարանը կարող է վստահաբար ասել, որ այդ պահի դրությամբ տվյալ վարույթը ընթացքի մեջ էր առնվազն հինգ տարի և երեք ամիս և, հնարավոր է, և յոթ տարի անց էլ դեռ շարունակվում է:

129. Դատարանը համարում է, որ դիմումատուի համար ռիսկի գործոնի աստիճանը մեծ էր, քանի որ նա երկարատև ժամանակահատվածում տառապել է իր ապագայի մասին անորոշության զգացումից՝ հաշվի առնելով, որ նրան սպառնում է քրեական գործով դատապարտում: Այս առումով Դատարանը վերահաստատում է, որ քրեական վարույթում մեղադրյալն իրավունք ունի պահանջելու, որ իր գործի քննությունն իրականացվի հատուկ ջանասիրությամբ, և որ քրեական գործերում 6–րդ հոդվածը կոչված է ապահովելու այն, որ մեղադրյալը, վարույթի արդյունքների առումով, չափազանց երկար չգտնվի անորոշ իրավիճակում (տե՛ս *Nakhmanovich v. Russia*, թիվ 55669/00, § 89, 2006 թվականի մարտի 2, և *Hajibeyli v. Azerbaijan*, թիվ 16528/05, § 51, 2008 թվականի հուլիսի 10):

130. Ավելին, Դատարանին չի ներկայացվել որևէ նյութ, որը հնարավորություն է կտար ենթադրել, որ գործն ունեցել է առանձնակի բարդություն: Այն փաստը, որ գործով առկա էին երեք մեղադրյալներ, ինքնին բավարար չէր այդպիսի ենթադրություն անելու համար: Կառավարությունը նույնպես չէր վիճարկել, որ այդ գործով որոշում կայացնելը առանձնապես բարդ էր: Ամեն դեպքում, Դատարանը այն կարծիքին է, որ առնվազն հինգ տարվա և երեք ամսվա ժամանակահատվածի տևողությունը, որի ընթացքում գործը մնացել էր նախաքննության փուլում, չի կարող բացատրվել բացառապես գործի բարդությամբ:

131. Դատարանը նաև նշում է, որ պարզ չէ, թե արդյոք 2005 թվականի հոկտեմբերի 10–ի և 2006 թվականի օգոստոսի 10–ի՝ վարույթի կասեցման ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածում կատարվել են քննչական գործողություններ: Ավելին, գործի նյութերից հնարավոր չէ ենթադրել, որ վարույթի կասեցումից հետո՝ այսինքն առնվազն չորս տարվա ընթացքում իրականացվել են քննչական գործողություններ: Կառավարությունը տեղեկատվություն չի տրամադրել

այն մասին, թե արդյոք մեղադրող կողմը ձեռնարկել է որևէ միջոցառում անհայտ կորած անձանց հայտնաբերման ուղղությամբ այդպիսի վարույթի շարունակական կասեցման համար հիմքը վերացնելու նպատակով:

132. Վերոշարադրյալ նկատառումները բավարար են, որպեսզի Դատարանը եզրահանգի, որ վարույթի տևողությունը եղել է չափազանց երկար և չի բավարարել «ողջամիտ ժամկետի» պահանջը:

133. Համապատասխանաբար, տեղի է ունեցել 6–րդ հոդվածի 1–ին կետի խախտում:

VI. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

134. Դիմումատուն ներկայացրել է նաև մի շարք այլ բողոքներ՝ համաձայն Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 1–ին, 3–րդ և 4–րդ կետերի և 10–րդ հոդվածի:

135. Հաշվի առնելով իր տրամադրության տակ առկա բոլոր նյութերը և որքանով այդ բողոքները գտնվում են իր իրավասության շրջանակներում, Դատարանը գտնում է, որ դրանցով չի բացահայտվում Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների խախտման որևէ դեպք: Հետևաբար, գանգատի այս մասը պետք է մերժվի ակնհայտորեն անհիմն լինելու պատճառով՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3–րդ և 4-րդ կետերի:

VII. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41–ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

136. Կոնվենցիայի 41-րդ հոդվածով նախատեսվում է ՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

137. Դիմումատուն պահանջել է 128, 400 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

138. Կառավարությունը առարկել այդ պահանջ դեմ:

139. Դատարանը գտնում է, որ դիմումատուն, անկասկած, կրել է ոչ նյութական վնաս սույն վճռով ճանաչված Կոնվենցիայի խախտման առումով: Առաջնորդվելով արդարացիության սկզբունքով՝ Դատարանը դիմումատուին տրամադրում է 2, 500 եվրո փոխհատուցում որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Բ. Ծախսերը և ծախքերը

140. Դիմումատուն չի ներկայացրել ծախսերի և ծախքերի փոխհատուցման պահանջ:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

141. Դատարանը նպատակահարմար է գտնում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոս:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ՝

1. *Հայտարարում է,* ձայների մեծամասնությամբ, ընդունելի՝ Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 1–ին կետի և 6–րդ հոդվածի 1–ին կետի ներքո ներկայացված բողոքները 2005 թվականի հոկտեմբերի 10–ին ժամը 21:50–ի և 2005 թվականի հոկտեմբերի 11–ի ժամը 5:05–ի միջև ընկած ժամանակահատվածում ազատությունից զրկված լինելու օրինականության և վարույթի տևողության վերաբերյալ, իսկ գանգատի մնացած մասն՝ անընդունելի.

2. *Վճռում է,* հինգը երկուսի ձայների հարաբերակցությամբ, որ Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 1–ին կետի խախտում տեղի չի ունեցել.

3. *Միաձայն վճռում է,* որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին կետի խախտում.

4. *Միաձայն վճռում է*

ա) որ պատասխանող Պետությունը, վճիռը Կոնվենցիայի 44–րդ հոդվածի 2–րդ կետի համաձայն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում դիմումատուին պետք է վճարի 2, 500 եվրո (երկու հազար հինգ հարյուր եվրո)՝ գումարած նշված գումարին հաշվարկվող բոլոր

տեսակի հարկերը որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, որը պետք է փոխարկվի պատասխանող պետության ազգային արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը պետք է վճարվի վերը նշված գումարի պարզ տոկոս՝ Եվրոպական կենտրոնական բանկի կողմից փոխառության տրամադրման համար սահմանված առավելագույն տոկոսադրույքի չափով, պարտավորությունների չկատարման ժամանակահատվածի համար՝ գումարած երեք տոկոս.

5. *Միաձայն մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և գրավոր ծանուցվել է 2012 թվականի հուլիսի 10-ին՝ համաձայն Դատարանի Կանոնակարգի 77–րդ կանոնի 2-րդ և 3–րդ կետերի:

Marialena Tsirli	Josep Casadevall
Քարտուղարի տեղակալ	Նախագահ

Համաձայն Կոնվենցիայի 45–րդ հոդվածի 2–րդ կետի և Դատարանի Կանոնակարգի 74–րդ կանոնի 2–րդ կետի դատավորներ J. Šikuta–ի և N. Tsotsoria–ի համատեղ առանձին կարծիքը կցվում է սույն վճռին:

J.C.M
M.T.

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ŠIKUTA ԵՎ TSOTSORIA ՀԱՄԱՏԵՂ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

Ցավոք, մենք չենք կարող համաձայնվել մեծամասնության հետ այն հարցում, թե Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 1–ին կետի խախտում տեղի չի ունեցել, հետևյալ պատճառներով:

Սույն գործում Դատարանը կոչված էր պատասխանել երկու հարցերի՝ Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն անհրաժեշտ վերլուծություն անցկացնելու համար.

1. Դիմումատուն զրկվե՞լ էր ազատությունից, թե ո՞չ:

2. Եթե այո, ապա ազատությունից զրկումը օրինակա՞ն էր, այսինքն, այն հիմնվա՞ծ էր հստակ սահմանված և կանխատեսելի իրավական դրույթների վրա:

Համաձայն Քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ «ՔԴՕ») 129–րդ և 130–րդ հոդվածների, անձին կարելի է ձերբակալել. 1) հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա. կամ՝ 2) քրեական հետապնդման մարմնի որոշման հիման վրա: Երկու դեպքում էլ ձերբակալումը չպետք է գերազանցի 72 ժամը՝ սկսած անձին արգելանքի վերցնելու պահից:

Համաձայն ՔԴՕ–ի 132–րդ հոդվածի 1–ին մասի 3–րդ կետի՝ ձերբակալվածը ենթակա է ազատման, եթե լրացել է ձերբակալման՝ սույն Օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը, և դատարանը մեղադրյալին կալանավորելու մասին որոշում չի կայացրել:

ՔԴՕ–ի 65–րդ հոդվածի 4–րդ մասի 6–րդ կետով նախատեսվում է, որ մեղադրյալը պարտավոր է մինչև ընդմիջում հայտարարելն առանց նախագահող դատավորի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը: 73–րդ հոդվածի 5–րդ մասի 3–րդ կետի համաձայն պաշտպանը պարտավոր է նույնը անել:

Կարևոր է կրկին նշել, որ կալանավորումը պետք է լինի օրինական: 5–րդ հոդվածի 1–ին կետում առկա «օրինական» և «օրենքով սահմանված կարգով» արտահայտությունները ըստ էության հղում են կատարում ներպետական իրավունքին և ամրագրում են այդ իրավունքի նյութաիրավական և ընթացակարգային պահանջները պահպանելու պարտավորությունը: Ավելին, անձին ազատությունից զրկող ցանկացած միջոց պետք է համապատասխանի 5-րդ հոդվածի նպատակին, մասնավորապես՝ անձին կամայականությունից պաշտպանելուն (տե՛ս *Winterwerp v. the Netherlands*, 1979 թվականի հոկտեմբերի 24, § 39,

շարք «Ա», թիվ 33, և *Lukanov v. Bulgaria*, 1997 թվականի մարտի 20, § 41, Վճիռների և որոշումների մասին զեկույցներ 1997-II):

Երբ քննարկվում է ազատությունից զրկելու հարցը, հատկապես կարևոր է, որ պահպանվի իրավական որոշակիության ընդհանուր սկզբունքը: Հետևաբար, էապես կարևոր է, որ ներպետական իրավունքով ճշգրիտ կերպով սահմանված լինեն ազատությունից զրկելու պայմանները և օրենքն ինքնին կանխատեսելի լինի կիրառության առումով՝ արդյունքում համապատասխանելով Կոնվենցիայով սահմանված «օրինականության» չափանիշին, համաձայն որի պահանջվում է, որ ցանկացած օրենք լինի բավարար չափով ճշգրիտ, որպեսզի ցանկացած ոք, անհրաժեշտության դեպքում համապատասխան խորհրդատվությամբ, հնարավորություն ունենա կանխատեսել իր գործողությունների հնարավոր հետևանքները՝ այնքանով, որքանով դա ողջամտորեն հնարավոր է տվյալ իրավիճակում (տե՛ս *Steel and Others v. the United Kingdom*, 1998 թվականի սեպտեմբերի 23, § 54, Զեկույցներ 1998-VII):

Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ նշվել է, որ դիմումատուն պաշտոնապես ձերբակալվել է 2005 թվականի հոկտեմբերի 7–ին, ժամը 21:50-ին: Համաձայն ներպետական իրավունքի՝ ձերբակալումը չի կարող տևել 72 ժամից ավելի և ձերբակալվածը պետք է ազատ արձակվի, եթե լրացել է ձերբակալման առավելագույն ժամկետը և դատարանը նրան կալանավորելու մասին որոշում չի կայացրել (ՔԴՕ–ի 129–րդ հոդվածի 2–րդ մաս և 132–րդ հոդվածի 1–ին մասի 3-րդ կետ): 2005 թվականի հոկտեմբերի 10–ին, մոտավորապես ժամը 20:20–ին՝ դիմումատուի՝ կարճաժամկետ ձերբակալման ժամկետը լրանալուց մեկ և կես ժամ առաջ դիմումատուն տարվել է դատավորի մոտ, որպեսզի վերջինս որոշում կայացնի դիմումատուին կալանավորելու վերաբերյալ: Այս դատական նիստը տևել են մինչև հաջորդ օրվա ժամը 5:05–ը, երբ դատավորը որոշել է բավարարել քննիչի միջնորդությունը և կալանավորել դիմումատուին:

Կողմերը համաձայնել են, որ դիմումատուին չի թույլատրվել ազատ տեղաշարժվել դատաքննության ընդմիջումների ժամանակ, նույնիսկ 2005 թվականի հոկտեմբերի 10–ին՝ ժամը 21:50–ից հետո, երբ նա, տեսականորեն, ազատության մեջ էր գտնվում: Կառավարությունը ձգտել է հիմնավորել այդ իրավիճակը՝ հղում կատարելով ՔԴՕ–ի 65–րդ հոդվածի 4–րդ մասի 6–րդ կետին, որտեղ ասվում է, որ մեղադրյալը պարտավոր է մինչև ընդմիջում հայտարարելն առանց նախագահող դատավորի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը, և պնդել է, որ դիմումատուն այդ ժամանակահատվածում ազատությունից զրկված չի եղել:

Այնուամենայնիվ, մենք չենք կարող համաձայնել Կառավարության փաստարկների հետ: Այդ փաստարկներում տարբերակում է կատարվում մեղադրյալի՝ որոշակի գործողություններ կատարելու՝ այս դեպքում դատաքննությանը ներկա գտնվելու պարտավորության, և անձի ազատությունը ֆիզիկապես սահմանափակելու միջև: Այս դեպքում, ոստիկանության չորս ծառայողներ դիմումատուին ֆիզիկապես չեն թույլատրել լքել որոշակի սահմանափակ տարածք՝ չնայած այն փաստին, որ դատական նիստի մյուս մասնակիցներին թույլատրվել է ազատորեն տեղաշարժվել ընդմիջումների ժամանակ և այն փաստը, որ ըստ ներպետական իրավունքի նա այլևս ձերբակալված չէր բայց և կալանավորված էլ չէր: Հետևաբար մենք եզրակացնում ենք, որ դիմումատուն զրկված էր ազատությունից դատաքննության ընթացքում 2005 թվականի հոկտեմբերի 10–ին ժամը 21:50–ից մինչև հոկտեմբերի 11–ի ժամը 5:05–ը: Մնում է որոշել, թե արդյոք ազատությունից զրկելը իրավական հիմք ուներ:

Կառավարությունը հիմնվել է ՔԴՕ–ի 65–րդ հոդվածի 4–րդ մասի 6–րդ կետի վրա: Այնուամենայնիվ, այդ հոդվածում չկա ոչինչ, ինչը հստակ կերպով թույլ է տալիս սահմանափակել անձի ազատությունը: Ավելին, հոդվածում ասվում է դատական նիստերի դահլիճը չլքելու պարտավորության մասին, մինչդեռ դիմումատուի գործում նա այլևս չէր գտնվում դատավորի՝ ակնհայտորեն որպես դատական նիստերի դահլիճ ծառայող աշխատասենյակում, երբ նրան թույլ չեն տվել ազատ տեղաշարժվել դատական նիստի ընդմիջումների ժամանակ: Հարկ է նշել նաև, որ չի կարելի անտեսել այն, որ 65–րդ հոդվածի 4–րդ մասի 6–րդ կետով մեղադրյալին թույլատրվում է լքել դատական նիստերի դահլիճը ընդմիջման ժամանակ: Սա հստակորեն թույլ է տալիս ենթադրել, որ սույն դրույթի նպատակն է ապահովել դատական նիստերի դահլիճում կարգուկանոնը և դատական գործընթացի կանոնավոր ընթացքը, քան ազատությունից զրկելու հարցերի հետ առնչվելը: ՔԴՕ–ի 73–րդ հոդվածի 5–րդ մասի 3–րդ կետի համաձայն՝ պաշտպանը պարտավոր է նույնը անել (տե՛ս վճռի 51–րդ կետը), մի փաստ, որով նույնպես հստակ մատնանշվում է, որ այս պահանջը ոչ մի կապ չունի ազատությունից զրկելու հարցերի հետ:

Մեղադրյալը ինքը պետք է որոշի ազատության մեջ գտնվելու ընթացքում կատարել այդ պարտավորությունը, թե կրել հնարավոր պատժամիջոցներ: Այսպիսով, մենք եզրակացնում ենք, որ 65–րդ հոդվածի 4–րդ մասի 6–րդ կետը չի կարող ծառայել որպես վերոնշյալ ժամանակահատվածում դիմումատուին ազատությունից զրկելու բավականաչափ հստակ և կանխատեսելի իրավական հիմք:

Վերջապես, կարելի է ընդունել, որ դատաքննության որոշակի ձգձգումները պայմանավորված են եղել գործում ներգրավված փաստաբանների թվով և նրանց կողմից ներկայացված բազմաթիվ միջնորդություններով և առարկություններով: Այնուամենայնիվ, Կառավարությունը բացատրություն չի տրամադրել այն մասին, թե ինչու են դիմումատուին տարել դատավորի մոտ ձերբակալման եռօրյա ժամկետը լրանալուց ընդամենը մեկ և կես ժամ առաջ: Գործի նյութերից ոչ մեկը հնարավորություն չի տալիս ենթադրել, որ 2010 թվականի հոկտեմբերի 8-ի և դիմումատուի՝ դատավորի մոտ տարվելու պահի՝ 2010 թվականի հոկտեմբերի 10–ի միջև ընկած ժամանակահատվածում իրականացվել են քննչական գործողություններ: Այս առումով պետք է վերահաստատել, որ պայմանագրի կողմ պետությունները պետք է այնպես ձևավորեն իրենց իրավական համակարգը, որ իրավապահ մարմինները կարողանան կատարել իրենց պարտականությունը, այն է՝ խուսափել ազատությունից չարդարացված ձևով զրկելուց (տվյալ գործում 72 ժամը գերազանցող ժամկետով արգելանքը) (տե՛ս *Shukhardin v. Russia*, թիվ 65734/01, § 93, 2007 թվականի հունիսի 28, *Matyush v. Russia*, թիվ 14850/03, § 73, 2008 թվականի դեկտեմբերի 9 և *Asatryan v. Armenia*, թիվ 24173/06, § 45, 2010 թվականի փետրվարի 9): Այսպիսով, մեր կարծիքով, դիմումատուին՝ 2005 թվականի հոկտեմբերի 10–ին, ժամը 21:50-ի և 2005 թվականի հոկտեմբերի 11-ին, ժամը 5:05–ի միջև ընկած ժամանակահատվածում ազատությունից զրկելը զուրկ էր պատշաճ իրավական հիմքից:

Մեր կարծիքով օրենքի հիման վրա սահմանված՝ ձերբակալման 72 ժամ տևողությամբ ժամանակահատվածը չպետք է որևէ հանգամանքներում երկարաձգվեր (տե՛ս *Salayev v. Azerbaijan*, թիվ 40900/05, §§ 44-48, 2010 նոյեմբերի 9, և *Farhad Aliyev v. Azerbaijan*, թիվ 37138/06, §§ 166-169, 2010 թվականի նոյեմբերի 9, երբ դատարանը գտել էր, որ տեղի էր ունեցել Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 1–ին կետի խախտում, քանի որ դիմումատուի կալանավորումը գերազանցել է ներպետական իրավունքով թույլատրված 48 ժամը): Այն փաստը, որ դիմումատուին տարել են դատավորի մոտ 72 ժամվա ընթացքում, և որ դատաքննության տևողությունը գերազանցել է 72 ժամը, մեր կարծիքով, չի փոփոխում այն ենթադրությունը, որ նա զրկվել էր ազատությունից դատարանի տարածքում մինչ դատարանը որոշում էր կայացնում խափանման միջոցի կիրառման մասին, և որ ազատությունից զրկելը օրինական չէր Կոնվենցիայի 5–րդ հոդվածի իմաստով: Այն դեպքում, երբ կալանավորման առավելագույն ժամկետը սահմանվում է օրենքով և վերջնական է, կալանավորման համար պատասխանատու մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ նախազգուշական միջոցները՝ ապահովելու համար, որ

թույլատրված ժամկետը չգերազանցվի (տե՛ս, *K.-F. v. Germany*, 1997 թվականի նոյեմբերի 27, § 72, *Զեկույցներ* 1997-VII): Հետևաբար, կարևոր չէր, թե արդյոք այս ձգձգումը վերագրելի էր դատավորին (տե՛ս վճռի 86–րդ կետը), քանի որ ՔԴՕ–ի 129–րդ և 130–րդ հոդվածների պահանջը պարզ է՝ ձերբակալման ժամկետը չպետք է գերազանցի 72 ժամը՝ սկսած անձին արգելանքի տակ վերցնելու պահից: Ավելին, ՔԴՕ–ի 132–րդ հոդվածի 1–ին մասի 3–րդ կետի համաձայն՝ ձերբակալվածը պետք է ազատ արձակվի, եթե Օրենսգրքով սահմանված ձերբակալման առավելագույն ժամկետը լրացել է (տե՛ս 55–րդ կետ):

Հետևաբար, ՔԴՕ–ի 65–րդ հոդվածի 4–րդ մասի 6–րդ կետով, ինչպես նաև հաշվի առնելով այնպիսի դրույթի բացակայությունը, որով կարգավորվում է այն առավելագույն ժամանակահատվածը, որի ընթացքում դատավորը պարտավոր է կալանավորման կամ ազատման վերաբերյալ որոշում կայացնել, չի նախատեսվում դիմումատուին ազատությունից զրկելու և նրա համար անորոշ իրավական իրավիճակ ստեղծելու որևէ տեսակի հստակ իրավական հիմք: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ՔԴՕ–ի 132–րդ հոդվածի 1–ին մասի 3–րդ կետի պարզ և հստակ ձևակերպումները՝ դիմումատուն՝ դատարանի կողմից համապատասխան որոշման բացակայության պայմաններում, պետք է ազատ արձակվեր 72 ժամը լրանալուց հետո:

5–րդ հոդվածի ներքո պաշտպանվող իրավունքների կարևորությամբ պայմանավորված պահանջվում է, որ օրենսդրությամբ պետք է հստակ սահմանվի պարտադիր ժամկետ, որի ընթացքում դատավորները պետք է որոշում կայացնեն մինչդատական կալանքի հարցի վերաբերյալ, որը ձերբակալման տակ գտնվելու առավելագույն ժամկետի հետ միասին չպետք է գերազանցի 72 ժամը՝ Կոնվենցիայի 5–րդ հոդվածի խախտումից խուսափելու համար:

Վերոնշյալ պատճառների հիման վրա մեզ այլ բան չի մնում, քան հանգել եզրակացության, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 1–ին կետի խախտում: Սա նաև հանգեցնում է մեր այն կարծիքին, որ 5–րդ հոդվածի 5–րդ կետի իմաստով բողոքը պետք է հայտարարվեր ընդունելի և պետք է արձանագրվեր խախտում: